

5324

542-192

93

66

891.99-192

Q-92

0

9-p

Հրատարակութիւն Կ. Արզումանեանի

# ԱՐՇԱԼՈՅՍԻ ՁԱՅՆԵՐ

ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ

Յ91.542-192

Ա-93



ՀԱՅՐԵՆՆԱԻՐԵԿՐՆ ՈՏԵՆՆԻՈՐՆԵՐ ԵՒ ԵՐԳԵՐ  
(Ժողովածու)

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐԱԼԵԱ» Գրադպրոցական փող. № 6.

1915

891.99-192

Ա-92

Հրատարակւիլն է. Արգումանեան

19 NOV 2011

# ԱՐՇԱԼՈՅՄԻ ԶԱՅՆԵՐ

ՆՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ

1003  
13184



5324

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՏՐՆԵՒՈՐՆԵՐ ԵՒ ԵՐԳԵՐ  
(Ժողովածու)

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրախոսական փող. № 6.

1915

26.02.2013

12.787

891.542-192

Ա - 93

===== ՆՈՒԷՐ ՀԱՅ

ԿԱՄԱԽՈՐՆԵՐԻՆ =====




## ԹԻԻՐՔԱՀԱՅԻ ԲԱՂՉԱՆՔԸ

Այս, հայրենիք, երբ կը տեսնեմ քեզի լաւ,  
Ուրախ, զուարթ, ապահովուած, առանց ցաւ.  
Ե՞րբ կստանաս քաղաքական մեծ համբաւ,  
Որ դու հաղնիս արքայական նոր հալաւ.  
Զը մեռնէի մէկ տեսնէի անդրաւ,  
Քո թշնամու կեանքը լինէր քեզ գրաւ:

Մէկ տեսնէի կարին նստած հայ իշխան,  
Հայ տառերով գրէր հայոց հրաման.  
Տիգրանակերտ, Մուշ, Բայազէդ, դէպի վան  
Հայոց զօրքերն ուղարկուէին պահապան.  
Քուրդ ու տաճիկ գլուխ ծռած հայութեան,  
Ճանաչէին որ սա է բարձր ազգն իրաւ:

Փառք այն աւուր, ո՞հ հազար փառք այն ժամին,  
Հայաստանը երբ Հայոց տալ կը կամին.  
Թող նկատեն այնժամ հայկեան երամին  
Տեսնեն ինչպէս շուտ կը յաղթեն թշնամին.  
Ապերախտ չեն քաջ թուռները Արամին,  
Միշտ կը պահեն իրանց ցեղը անպարսաւ:



13184

Արդեօք պիտի տեսնիմ մի հայ դատաւոր  
Տաճկա-Հայաստանում նստած փառաւոր,  
Պիտի վերանայ լուսինը կիսաբոլոր,  
Նրա տեղը խաչը փայլէ ահաւոր,  
Այնտեղ իշխէ քրիստոնեայ թագաւոր,  
Ժպտայ մի օր Հայաստանի բախտը սեռաւ:

Արդեօք կուգայ այն օրը մեզի համար  
Ազատութեան հոգսը քաշենք անդադար,  
Աշխարհումս մի բան չկայ անհնար,  
Աշխատելով մարդ կը գտնի նրան ճար,  
Եթէ Աստուած լինի մեկին բարեբար,  
Զի վնասուիլ այնպէս ազգը ոչ բնաւ:

1878

## Ե Ր Կ Ի Ր

Այնչեւ կեանքիս վերջը քեզ պիտի սիրեմ,  
Ով իմ ծննդավայր սրբազան երկիր.  
Ես մի չոր կեանք ունիմ, թող քեզ նուիրեմ  
Ինձ կեանք շնորհող մայր, անմահ երկիր:

Շատ ունիս անձնազոհ, եռանդուն մշակ,  
Քեզ սիրում են որպէս հարազատ զաւակ,  
Ազատ շունչ կը քաշես, կուգայ ժամանակ  
Սպասէ և յուսա, պատուական երկիր:

Դու ես աղքայնութեան հրահանգ տուող,  
Սրտիս մխիթարանք, սփոփանք տուող,  
Նախնիքներուս սնունդ տուող, կեանք տուող,  
Իմ բնիկ հայրենիք, բնական երկիր:

Զիւանին երբ պիտի տօնէ զատիկդ,  
Ապրիլ ամսում արեւ դարձած մահիկդ,  
Փոխուած տեանէի քո կրակէ շապիկդ,  
Հագնէիր նոր տեսակ պատմութեան, երկիր:

## ԻՄ ՍԶԳԸ

Ազգ իմ, որքան նկուն մնաս,  
Սիրտս քեզանից չի զատուի.  
Հազար տեսակ հարչարանք տաս  
Սիրտս քեզանից չի զատուի:

Քեզ չեմ մոռանայ յաւիտեան  
Հարազատ մայր իմ, Հայաստան.  
Թէկուզ դրախտն էլ ինձի տան,  
Սիրտս քեզանից չի զատուի:

Քեզանով եմ ես երջանիկ  
Իմ սիրելի, իմ անուշիկ,  
Ծոցիդ մէջը հանգչիմ մայրիկ  
Սիրտս քեզանից չի զատուի:

Ջիւանին եմ, քեզ բարեկամ,  
Քանի ողջ եմ, ամենայն ժամ,  
Հնդկաստանին էլ տէր դառնամ  
Սիրտս քեզանից չի զատուի:

1779

## ԻՄ ՀԱՄՈՋՄՈՒՆՔԸ

Քաղցած, ծարաւ հայ կը մնամ ճշմարիտ  
Փառամոլ ազգուրաց իշխան չեմ լինի.  
Եթէ ինձ խոստանան գահիսոն և դահ  
Ձեմ ընդունիլ, աղգակործական չեմ լինի:

Հայի պատը խիստ ամուր է յօրինուած,  
Շատ աղգեր է ճամբել սպառազինուած.  
Ես չեմ քանդիր ցանկը հայրենի շինուած,  
Անապատի օձին արժան չեմ լինի:

Թէև շատ բանի մէջ խեղճ եմ, տկար եմ,  
Բայց այս համոզմունքիս մէջը հաստատեմ.  
Իմ ազգիս մէջ ժամկոչութեան յօժար եմ,  
Ուրիշ ազգի բարոգարան չեմ լինի:

Ջիւանս կը մնամ ժրաջան, արի,  
Չարակամ եղբօրցս ցանկալով բարի  
Սեանքում կը մնամ քառասուն տարի,  
Չիք խաչատուր Պապախանեան չեմ լինի:

## ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

Ես մի ծառ եմ ծիրանի,  
Հին արմատ եմ անուանի.  
Պտուղներս քաղցրամ,  
Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ արեւելեան,  
Չունիմ որոշ այգեպան.  
Տունկերս ամեն երկիր,  
Ընկած են բաժան բաժան:

Ապրում եմ խեղճ, միայնակ,  
Որոշ ծառի շուքի տակ  
Նիւթս որդունքն է ծծում  
Իմ տունկերուս փոխանակ:

Տունկերս ուր էլ որ դնան,  
Թէպէտ նոյնը կը մնան,  
Բայց օտար հողի վերայ  
Չեն աճիլ, կը չորանան:

Արեւելքում ինձ տնկեց  
Երբ որ Աստուած ստեղծեց  
Ասաւ աճէ, բազմացիր  
Մի այգի էլ ինձ տուեց:

Ուղարկեց մի այգեպան  
Հարաւից հսկայ իշխան  
Այն հսկայի անունով  
Կոչուեցայ ծառ հայկական:

Ձորս հաղար տարուայ ծառ եմ  
Մարմինս պինդ, կայտառ եմ.  
Թէև ոյժս պակաս է,  
Բայց անուշով պայծառ եմ:

## Հ Ա Յ Ե Ր

Ստարներու լաւ բաները սովորենք  
Ո՛չ թէ վատ գործերուն հետեւենք, հայեր.  
Զիցէ ուղիղ ճանապարհից մոլորուենք  
Կրենք ամեն տեսակ նախատինք, հայեր:

Պահպանենք մեր լեզուն, մեր եկեղեցին,  
Մեր սովորութիւնը, ծէսը առանձին.  
Պապերէս քնացած գանձ են թանգագին,  
Կը վկայեն երկիր ու երկինք, հայեր:

Մարդկութեան մէջ մենք էլ շոկ ազգ ենք, զատ ենք.  
Մեր լեզուով խօսելու համար ազատ ենք,  
Մեր գոյութեան քնացած գործերը ատենք  
Որ չը լինինք կաղ ու ծուռ շլինք, հայեր:

Մեր հոգին փրկութեան կարօտ չէ հիմա.  
Մեր մէջը քարոզող և խրատող կայ.  
Օտարը թող մեզի հացի դուռ ցոյց տայ.  
Քրիստոնէութիւն մենք ունենք, հայեր:

Զիւանի, պապերս կեանքերն են տուել,  
Որ իրանց կրօնը պաշտեն անարգել.  
Մինչև որ մեզ այս օրուան են հասցրել,  
Թափել են շատ արիւն ու քրտինք, հայեր:

## ՀԱՅԻ ՃՈՒՏ

Պու այն երկրէն մի հեռանար հայի ճուտ,  
Ուր որ նախնիքներէդ յիշատակներ կան.  
Մրսած ժամանակդ կը քաղես օգուտ  
Դեռ մոխրի մէջ թաղուած հին կրակներ կան:

Բնակուած երկերդ սուրբ է հայ եղբար  
Հայի արնով ներկւած է ամեն քար.  
Զոհուել են հաւատի և ազգի համար  
Պառկած հաղարաւոր նահատակներ կան:

Զիւան, ազգիդ հաւատարիմ ծառայէ  
Տեղը եկաւ, մինչև կեանքդ ընծայէ.  
Հայրենիքիդ վրայ լաւ աչքով նայէ  
Իւր մէջը հոգերու խ աւերակներ կան:

## ՆՈՒԷՐ ՍԱՍՈՒՆՑԻ ՄԱԿԱՐԻՆ

Էգուց էլ օր կը բացուի նոր դարունը,  
Սասունը կը դառնայ դրախտ երկնային.  
Կը կոչէ իւր ցրուած որդոց անունը  
Կը հաւաքուին այնտեղ քաջերը մին-մին:

Մակար, ի՞նչ կը խորհիս, ասա ինձ խնդրեմ  
Ձը պիտի մասնակցես սուրբ դործին վսեմ.  
Քու այստեղ մնալուդ ես հաւատալ չեմ  
Կը դառնաս հայրենեաց գիրկը դու կրկին.

Այնտեղ պիտի ծագէ արեւ հայերուն  
Այնտեղ պիտի տրուի պարգև հայերուն.  
Գնա եղիր թիկունք ու թև հայերուն  
Տնոր քու եղբայրներդ հետդ միասին:

Եկ Զիւանու լսէ, հետեիր մտքիս  
Դարձիր քո երկիրը, դարձիր իմ հոգիս,  
Ինչ որ կորցրել ես այնտեղ կը գտնես  
Մի մոռանար սուրբ Սասունը թանկագին:

## ՎԵՐՋՆ Է ԳՈՎԵԼԻ

Լացի եւ խնդութեան մէջտեղն ենք այսօր  
Կուլանք թէ կը խնդանք—վերջն է գովելի.  
Քարոտ արտերի մէջ քցել ենք արօր  
Տրտմենք թէ կը ցնծանք—վերջն է գովելի:

Վեց պետութեան ձեռքն է այժմ մեր դերը  
Տեսնենք ինչպէս դուրս կը բերին պատկերը  
Երկբերնանի սուր են հայոց գործերը  
Հրճուինք եթէ կը ողբանք—վերջն է գովելի:

Զիւանս լսում եմ զանազան կարծիք  
Որը լաւ, որը վատ, չարիք ու բարիք.  
Իբրեւ ազգ՝ ունեցող ազատ հայրենիք  
Մեռնենք թէ կը մնանք վերջն է գովելի:

## Չ՝ Կ Ա Յ

Ահա լրանում է իննը ամիսը  
Մեզի նոր լուր, մեզի աւետիք չկայ  
Թէպէտ եւ ծաղկել է ծերուկ Մասիսը  
Փայլող, գոյնը տեղը մէկ ծաղիկ չկայ:

Մեր յուսոյ դռները փակուած են ամուր  
Մանկունք ցրտից կուլան կզկըթած, տխուր,  
Ժողովուրդը սպասում է ուրախ լուր  
Բարի, աւետարեի մունետիկ չկայ:

Զիւանի, մեծ ծովի ալիքների հետ  
Ձի կարող մարտնչել ամեն նաւապետ.  
Գնացողը ազուաւի պէս չի գալ յետ  
Նոյին կանաչ բերող աղունիկ չկայ:

## ԱՆՅԿԱԼԻ

Այսքան տարի դու ննջեցիր, բաւ է բաւ.  
Տխրութիւնդ սիրողներուդ ցաւ է, ցաւ.  
Արեւն եկաւ քո գլխիցդ անցկացաւ

Ձարթիր, զարթիր իմ աննման անցկալի  
Տեսութիւնդ է ամենիս ցանկալի,

Գարունն եկաւ, ձմրան դուռը գոցուեցաւ  
Սպասելով մեր սրտերը խօցուեցաւ  
Գիշերն անցաւ, առաւօտը բացուեցաւ

Ձարթիր, զարթիր, իմ աննման անցկալի  
Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:

Ազաչում եմ, խնդրում, մայրիկ, արթնացիր  
Քո արարքիդ դու ամաչիր, դու երկիր,  
Քոյրերիցդ ողջիցը յետ մնացիր.

Ձարթիր, զարթիր իմ աննման անցկալի  
Տեսութիւնդ է ամենիս ցանկալի:

## ԻՄ ՈՐԴՈՒՆ

Մեր նախնեաց հօտն առնել կուզեմ, իմ որդեակ  
Էջմիածին, Սուրբ-Կարապետ ուխտ գնա.  
Անին չը մոռանաս, թէ եւ աւերակ,  
Կը համարուի նտխնեաց փառքերուն վկայ:

Քո հարազատ մայրն է սուրբ Էջմիածին  
Սիրէ այդ սուրբ վայրը, սիրէ կաթողին.  
Պապերուս հիմնարկած տունն է թանկագին  
Հայոց համար դրանից մեծ տուն չկայ:

Անին յիշատակ է մեր վնհ հնութեան  
Արժէ նրան տեսնել թե եւ անկենդան.  
Անցեալ կեանքից այնտեղ դեռ շատ հետքեր կան  
Պահել պէտք է նրան որպէս անթիքա:

Լաւ է, այդ պատճառով Կարին էլ կերթաս,  
Յետոյ Մուշը, սիրուն դաշտը կը տեսնաս.  
Տորոսի լեռներուն կը ծանօթանաս  
Սուրբ Կարապետ ուխտ գնալով, հայ տղայ:

Երուսաղէմ գնա, թէ ունես ոսկի,  
Շատ դարձաս տուր, հայոց վսնքը պարտք ունի.  
Այդ սուրբ տեղն էլ պարտքից չը պրծաւ իսկի.  
Փողեր ստանալով աղպից անխնայ:

Ջիւան, մայր չի լինի բեղ օտար կինը  
Սիրէ քո իսկ մայրդ, սիրէ քո հինը  
Թողած հոգուդ մօտիկ Էջմիածինը  
Ի՞նչ գործ ունես Հոռոմ կամ Ամերիկա:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՂԸ

Մի աստղ ծնաւ արեւելքէն, լոյս ունէր առատ.  
Բոլոր աստղերու մէջ մէկ էր, չունէր համեմատ  
Սե սե ամպեր շուտ պատեցին, չը թողին ազատ

Խաւարի մէջ անհետացաւ, լոկ գիծը մնաց.  
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց:

Այդ աստղերը հինգ քոյր էին, մէկը շունէր յոյս,  
Զորսը արեւի շնորհիւ առան խրախոյս  
Առաջինին ոչ մի տեղից տուող չեղաւ լոյս

Խաւարի մէջ անհետացաւ, լոկ գիծը մնաց  
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց:

Եօթը փայլուն մեծ մեծ աստղեր ժողովան գումար  
Լուսնից ասպարէզ ուզեցին չորս աստղի համար.  
Արեւելքէն ծնունդ աստղը մնաց ՚ի շուար.

Խաւարի մէջ անհետացաւ, լոկ գիծը մնաց  
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց:

## Ս Ա Ս Ո Ւ Ն Յ Ի Ք

Հայստանի քաջ, անդրանիկ զաւակներ,  
Ողջ հայերուն փառք ու պարծանք սասունցիք.  
Ձեր ոտքերուն մատաղ, սուրբ նահատակներ,  
Մեր յոյս ու ապաւէն. մեր կեանք, սասունցիք:

Դէհ գրիք թշնամուն անվախ, քաջաբար,  
Զորս ամիս շարունակ կռուելով երկար.  
Զոհեցիք ձեր կեանքը հայութեան համար  
Տուիք հայրենիքին փրկանք, սասունցիք:

Ամեն մէկդ մէկ-մէկ խուժեցի Յովնան  
Առիւծի կորիւններ, հայրենեաց պաշտպան.  
Կամ կը մեռնիք, կամ կը մեռցնէք նորան,  
Ով որ քեզ տայ վիրաւորանք, սասունցիք:

Երանի քիչ մտքով լինեք սատանա  
Որ երբեմն ձեր գործը չը վատանայ.  
Ձեր նման ծներու թիւը շատանայ  
Կռուի դաշտում անխղճմտանք, սասունցիք:

Անհովիւ արածել էք, անփարախ պառկել  
Այծեամի հօտի պէս անվախ, անարգել.  
Ազատ մեծացել էք և ազատ ապրել  
Դուք չը պիտեք բանտ ու կապանք, սասունցիք:

Կռիւր ձեզ համար դարձել է մի խաղ.  
Քրդերու սրտերուն շատ էք դրել դաղ,  
Արաբացիք ձեր պապերից, ձեզնից վաղ  
Կրել են ջարդ և հալածանք, սասունցիք:

Միրել էք ձեր թափած արիւնը մաքուր,  
Մի բանի տեղ բռնէ, անց չը կենայ զուր  
Զօրանաք, երկիրը չը թողնէք թափուր  
Վայելէք մեծ պատիւ, յարգանք, սասունցիք:

Սուրբ Վարդանը նահատակեալ բանակով  
Ձեզ է դիմաւորում երկնից պսակով.  
Լուսաւորիչ, սուրբ Ներսէսով, Սահակով  
Ձեզ տալիս են մխիթարանք, սասունցիք:

Ձերթ ձագերուն սիրող և պաշտող թռչուն  
 Բարձր ժայռի գլխին հաստատում էք բուն.  
 Երբ լսում էք մատնիչ, վատ հայի անուն,  
 Զգում էք ձեր մէջը զգաւնք, սասունցիք:

Ոպասեցէք ձեր առուն էլ ջուր կուգայ.  
 Փոքր առուն մէկ օր մեծ գետ կը դառնայ.  
 Ինչքան համբերել էք դուք մինչև հիմա  
 Դեռ ունեցեք քիչ համբերանք, սասունցիք:

Ձեր մի փոքր լուցկին կը այրէ աշխարհ  
 Հրդէհներ կը գոյացնէ անհամար,  
 Մէկը հարիւր կըլինի, հարիւրը հազար,  
 Պէտք է քամի ու պէտք է ջանք, սասունցիք:

Դեռ երկունքի մէջ է սուրբ գործը արդար.  
 Բերածը արու է, կը ծնի դժուար՝  
 Մի թողնէք ձեր շինած գործը անկտար  
 Աշխատէք չը գործէք յանցանք, սասունցիք:

### ՀԱՅԵՐՈՒՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայերս մէկ լեզու, մէկ կրօն ունենք  
 Ուրիշ ոչինչ մեզի սեփական չկայ,  
 Մենք հայկական հագուստ, հայ տարազ չունենք  
 Կորել է հին ձևը, մէկ նշան չկայ:

Պապերս մէկ բանով շատ անգին էին,  
 Նպատակով տաճարներ կը շինէին.  
 Հին ֆնացած վանքերը չը լինէին,  
 Օտարը հեշտ կասէին «Հայաստան չկայ»:

Մի հատ եկեղեցի ունենք մերն է դուստ  
 Պարզ է, չունի այնքան բաներ նորամուտ,  
 Երգերը, գրաւիչ, մեղմ, հոգիօգուտ  
 Մեր շարականի պէս շարական չկայ:

Տէր, պահէ Արամեան հոգևոր գահը,  
 Մի մարիլ հայերուս մի հատիկ ջահը,  
 Նրա հետ կապուած է մեր ազգի շահը  
 Բացի սուրբ աթոռը մեզ պաշտպան չկայ:

Միանանք մէկ-մէկու կեանք նուիրելով  
 Հայ ապրենք, հայութեան գանձին տիրելով.  
 Ինչ որ ունենք պահենք իրար սիրելով,  
 Դրանից մեզի լաւ ուրիշ բան չկայ:

### ԱՆՅԵԱԼԻՑ ԵՒ ՆԵՐԿԱՅԻՑ

Բուլղարները ուսին են պարտական  
 Որ այսօր իբրև ազգ գոյութիւն ունին.  
 Վաղուց մտած կը լինէին գերեզման  
 Ոտից կոխան դարձած ամեհի թուրքին:

Բորբոքուեց սլաւեան մեծ ցեղի հուրը  
 Ալ արիւնով ներկեց ցամաքն ու ջուրը.

Հղօր արծուի ուժեղ ահարկու սուրը  
Կատաղի բորենուն տապալեց գետին:

Ծախսեց երկու հազար միլիօնի ստակ  
Տուեց քառորդ միլիօնի էլ նահատակ.  
Փրկուած ազգերը ամեն ժամանակ  
Թող օրհնեն ու պովեն քաջ հերոս ազգին:

## ԱԶԳԻ ՎԻՃԱԿԸ

Ծեծուած ու ջարդուած, հալածուած ազգը  
Ոչ մի մխիթարանք, սփոփանք չունի.  
Սփիւռս աշխարհի տարածուած ազգը  
Հայրենիք դառնալու ճիգ ու ջանք չունի:

Տանում է զրկանքը անխօս, լուռ ու մունջ  
Ա՛խ է քաշում սրտից, հանելով մրմունջ  
Չարհարում է այլոց համար անտրտունջ  
Խեղճը իրան համար աշխատանք չունի:

Տէր Աստուած, կոտորուած սրտերը շինէ  
Վատ օրերուն լաւ օրեր փոխարինէ  
Ինձ ասում են ուրախ երգեր յօրինէ  
Մտածում եմ, հայը ուրախ կեանք չունի:

Զիւան, հայը իւր կրօնը չի կարող թող տալ  
Ուզում է հայ ապրել, յաւետ հայ մնալ.  
Բնաւ նա մի ազգի վատ չի կամենալ  
Իւր մէջ զրպարտութիւն, պարուրանք չունի:

## ԶԵՅԹՈՒՆԻ ԵՐԳԸ

Ո՛վ մեծափառ սուլթան, մեզ հետ լաւ վարուի  
Վախկոտ հայերից չենք, գէյթունցի ենք մենք,  
Հրազէններովդ մի մխիթարուի,  
Զեռքիցդ կը խլենք, գէյթունցի ենք մենք:

Տկար կաշաղակը ուրուրի ձեռքն է  
Փախչող հաւերից չինք, բազէ ենք, բազէ՝  
Մահից վախենալը մեզի համար չէ  
Մեռնելու սովոր ենք, գէյթունցի ենք մենք:

Ի՛նչ քո Օսման պապը չեր եկել աշխարհ,  
Երբ մենք այս երկրում կայինք մեզ համար.  
Քաղցած ու մերկ, անսիրտ զօրքերդ յետ տար,  
Ողջիւն կը ջախջախենք, գէյթունցի ենք մենք:

Խէթ աչքով մի նայիր դու հայոց ազգին  
Նեցուկն է թուլացած քո տկար բազկին.  
Ինչքան որ խոչնդոտ լինես մեր բախտին,  
Այնքան դէմ կը դնենք, գէյթունցի ենք մենք:

\* \* \*

Ազատ մեծցած առիւծներ ենք  
Դժուար կուգայ կապանքը՝ մեզ.  
Քանի մեր տան մէջ ազատ չենք  
Ինչո՞ւ է պէտք այս կեանքը մեզ:

Մնաց մեր պահանջը արդար  
 Մնաց թերի և անկատար  
 Շինեց հողերին հաւասար  
 Եւրոպայի զրկանքը մեզ:

Զէյթունցի ենք. մեր ընկերը  
 Փամփուշտներ են, մեր գէնքերը.  
 Օր կուգայ բոլոր ազգերը  
 Կուտան փառք ու պարծանքը մեզ:

1896

## ՍԱՍՈՒՆ ԱՍԱՐ

Առանց վախի, առանց ահի  
 Քաջերու տուն Սասունասար  
 Քեզնից հրդեհ կը պատահի  
 Կրակի բուն Սասունասար:

Այսպէս դիրք բռնեց Յովնանը  
 Որ սարսեց Արարատանը  
 Քեզ չը յաղթեց ձիակիւղ խանը  
 Կեցար կանգուն Սասունասար:

Հայաստանը նոր կանաչեց  
 Թշնամին տեսաւ ամաչեց,  
 Եւրոպան քեզի ճաչանեց  
 Առար անուն Սասունասար:

Քրդի, թուրքի դահիճներ էք  
 Թունաւորող կարիճներ էք  
 Սարերու մէջ կտրիճներ էք  
 Դու և Զէյթուն, Սասունասար:

Վերացաւ խաւար գիշերը,  
 Վառուեց երկնային լապտերը.  
 Կապտեն բոլոր հայերը  
 Քեզնից գարուն Սասունասար:

1895

## Ա Ր Ե Ի

Արև, դու արև, որ անաչառ ես,  
 Ինչո՞ւ ես թողնում մեզ նսեմ ու փակ.  
 Այլ երկիրներու համար պայծառ ես,  
 Զգել ես Հայոց միշտ խաւարի տակ:

Դու մեր երկրէն նախ ծնունդ կառնես  
 Արդեօք ինչո՞ւց է մեզ վրայ սառն ես.  
 Այլոց հետ քաղցր, մեզի հետ դառն ես  
 Ի՞նչ է պատճառը, սիրուն արեգակ:

Զես նայում դէմքին խղճալոյն հեղի.  
 Շատ ժամանակ է չես յիշեր մեզի  
 Զէ՞ մեր պապերը պաշտել են քեզի  
 Դու մեզ պատժում ես պատույ փոխանակ:

Զէ, չէ, մայր լուսոյ, մի անիր այդպէս,  
 ծոյց տուր մեր ազգին արձակ ասպարէզ.  
 Թող մեր աշխարհն էլ ունենայ հանդէս,  
 Քեզանով մէկ օր գտնի ժամանակ:

Ո՛վ պայծառ արփի, լոյսդ անխափան  
 Աղաղակում եմ քեզ, սփռէ Հայաստան.  
 Մանաւանդ դէպի խեղճ Վասպուրական  
 Աշխարհին ցոյց տուր եղիր օժանդակ:

Երբ որ դու կերթաս դէպի Եւրոպա.  
 Մտքիդ ունեցիր փոքր Ասիա,  
 Մէկ դու մօտ արի, լուսինն էլ կուգայ,  
 Աստղերն էլ քեզնից կառնեն օրինակ:

Արե դու արե, արդար ու անմեղ  
 Ուղիիդ հանդէպ խաւար կայ ուժեղ,  
 Մեր հորիզոնից չեն գնում այլ տեղ  
 Սև սև ամպերը կան միշտ հակառակ:

## ԿԱՐԵԼԻ Է

Արտաշէս ու Տիգրան ծնած երկրրից,  
 Օր լինի որ էլի Տիգրաններ դուրս գան,  
 Դրախտ կոչուող վայրի հողից ու ջրից  
 Կարելի է ազնիւ իշխաններ դուրս գան:

Անհնար բան չկայ Աստուծոյ համար  
 Քարից Աբրահամներ կը հանի արդար,  
 Գայ այնպէս ժամանակ փոփոխուի աշխարհ  
 Թզուկներու տեղակ տիտաններ դուրս գան:

Ջիւանի, կը ճարէ հայը սրտակից  
 Կստանայ լաւ վիճակ, բարւոք, բարեկից.  
 Արիւնով ներկըւած հայի դաշտերից  
 Յուսալի է հսկայ Վարդաններ դուրս գան:

## «ՀՕ» ՏԱՌԸ

Երբ որ զլխատառից հասարակ դարձաւ  
 Գլորեցին աստիճանից «Հօ» տառը.  
 Փոքրանալով «Թօ»-ին հպատակ դարձաւ  
 Զրկըուեցաւ բառարանից «Հօ» տառը:

Մտաւ-ելաւ հարիւր տեսակ տպարան  
 Ձևը չը կորցրեց, պահեց ինքն իրան.  
 Շատ էլ մամուլի տակ սեղմեցին նորան  
 Ազատ պրծաւ ոլորանից «Հօ» տառը:

Երբ «Ռա»ն սկսեց «Թօ»-ի հետ մեծ դատ  
 «Սէն», «Բեն»-ը բառագրքում տեղ գտան ազատ  
 Մեծ «Կեն»-ի շնորհիւ նրանց համեմատ  
 Դուրս գալ կուզէ տանջարանից «Հօ» տառը

Զիւան, չը լինելով գեղազիր, նօտար,  
 Կոպիտ «Քէ»-ն էլ նորան չի թողնում դադար.  
 Ախն ու վախը իւր ճակատում գրուած կար  
 Երբ դուրս ելաւ ձուլարանից «Հօ» տառը:

## ԿՈՉ ՄԵՐ ՀԱՒԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Մեծահոգի և մեծ եղբայր ուսաներ  
 Ձեր փոքր եղբայրն է, յիշեցէք հային.  
 Յոյներ, վրացիներ, զարգացած լեհեր  
 Ձայն տուէք, օգնեցէք, հասէք միասին:

Հայը քիչ է, միայնակ է, տկար է,  
 Գայլի, բորենու հետ նա կեանք կը վարէ  
 Թոյլ մի տաք որ նրան տանջէ, չարչարէ  
 Մահմէդ մարգարէի անարժան որդին:

Հային տուէք վառօդ, փամփուշտ, հրացան,  
 Նա կարող է դառնալ իւր անձին պաշտպան,  
 Երբ կանգնել է նրա դէմը յանդիման  
 Թշնամին սարսիլով փռուել է գետին:

Զիւան, գժբախտ հայի վիճակը նեղ է  
 Փշուտ ու տատասկիտ տեղը վատ տեղ է.  
 Հայը երախտադէտ, կամեցող ցեղ է  
 Բարեկամի հաժար զոհ կը տայ հոգին:

## ՔԱՅԼԵՐԳ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԽԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(«Լուսին չկայ»-ի եղանակով)

Վսեմ, ահարկու պատկերդ  
 Դիւցադն Վահագնի նման  
 Քո կատարած մեծ գործերդ  
 Ձեն մոռացուիր երբէք, ով Խան:

Դու անվեհեր, անվախ հերոս  
 Քաջամարտիկ քաջ ձիաւոր.  
 Բասենում եղար մարտիրոս  
 Անդուգական կտրիճ զինւոր:

Թուրքաց ահարկու բանակը  
 Սարսափեցաւ, խիստ վախ դգաց  
 Հայի կարմիր դրօշակը  
 Երբ քո ձեռքով տեսան պարզած:

Թնդանօթները անխնայ  
 Ահեղագոյ որոտացին.  
 Գնդակները խմբիդ վրայ  
 Կարկտի նման տեղացին:

Քանի հայ կայ պիտի յիշուին  
 Սուրբ նահատակ պաշտիւի Խան  
 Հայ պատմութեան մէջ կը մտնես  
 Որպէս Վահան, որպէս Վարդան:

# ՍԱՍՆՈՅ ԱՆՑՔԵՐԻՑ

(ԴԱՍԻԹԱՆ)

Հազար իննը հարիւր չորս թուականին  
Տաւրոսի լեռներում ժայթքեց նոր կրակ.  
Թնդացին լեռները մայր Հայաստանին  
Փայլեց ազատութեան կարմիր դրօշակ:

Բանտից ու կապանքից ազատուած ոմանք  
Անուանի Սասնոյ մէջ որոնեցին կեանք.  
Տեղական քաջերից գտնելով յարգանք  
Հանդստանալ ուղեցին մէկ ժամանակ:

Հայ քաջերը աւելացան օր օրի  
Նրանց թիւը հասաւ մինչև հարիւրի.  
Ամենքն էլ միասիրտ և միահոգի  
Զինավարժութեան մէջ հմուտ, ընդունակ:

Զինուած ու պատրաստուած ողջը ժրաջան  
Ունէին հեռաձիգ բանուկ հրացան.  
Երգում արին սասնեցոց հետ միասին  
Կազմեցին հայկական մի փոքրիկ բանակ:

Ռազմագէտ Անդրանիկը բազմաշահ  
Եղաւ կառավարիչ հայ զօրքին անահ.  
Զորս գլխաւոր քաջեր ընտրեց թիկնապահ  
Մուրատ, Հրայր, Վահան և Սեպուհ-Արշակ:

Փոքրիկ ընդհարումներ եղան թէպէտ և  
Դործը չը մեծացաւ, անցկացաւ թեթև  
Ինքնապաշտպանութեան տուին կռուի ձև  
Թուրքերու մէջ բարձրացաւ ճիչ, աղաղակ:

Այս լուրը Սուլթանի ականջին հասաւ,  
Հայոց պատրիարքի վրայ նեղացաւ  
Սպառնալով այսպէս հրաման տուաւ  
«Խրատի հայերուդ, ուղարկէ կոնդակ»:

Պատրիարքը պատասխանեց խոր հոգուց  
Ասաւ «ես ոչինչ եմ, այսօր թէ էգուց  
Հեղինակութիւնս ընկել է վաղուց  
Քաղցր խօսքս նրանց թւում է ներհակ»:

Սուլթանը այլալուեց տխուր, սրտմտած  
Տակն ու վրայ եղաւ, սաստիկ ցաւ զգաց.  
Իւր նախարարներուն ասաւ բարկացած՝  
Բիթլիսի Վալին տալ հրովարտակ:

Վալին տիրոջ հրովարտակը կարգաց  
Հայերուն կոտորել հասկացաւ, զգաց  
Առաքելոց վանքի վանահօրն ասաց—  
«Արի գնա Սասուն, եղիբ պատուիրակ»:

«Գնա խրատէ քո հայ ժողովրդին  
Վնաս չը հասցնեն թուրքին ու քրդին  
Ասա չը հետեին այլոց խորհրդին,  
Բոլորին կը ջարդեմ, կանեմ շանսատակ»:

Վարդապետը գնաց, դատարկ յետ դարձաւ,  
Նրա քարոզներուն մի խող չեղաւ.  
Աճապարհեց վալին, շատ զօրք մօտ արաւ  
Խառնիխուն քուրդ ու խուժան ելուզակ:

Մանր խոշոր թնդանօթներ մօտ քսան,  
Եւ ռազմամթերքը առատ բաւական.  
Թուրքաց զօրքի թիւը կը լինէր այսքան  
Քսան հազար ձիաւոր ու հետեակ:

Առիւծ Գէորգ Չաւուշ, կայծակ և վահան  
Աւետիսի հետը հասան օգնութեան.  
Կանգնեցին թուրք զօրքի դէմը յանդիման,  
Հայոց կտիրճները անվախ, համարձակ:

Վալին ասաւ Անդրանիկին, ով տխմար,  
Անփորձ ճնճղուկի պէս թակարդը ընկար.  
**Չը գիտէս ում դէմը նապարէզ մտար**  
**Էս բաղէ եմ, դու մի ջնչին կաշաղակ:**

Անդրանիկը ասաւ **հոտած խելքի ծով**  
**Խօսքերդ քո գլխիդ կը բերեմ խոով.**  
Բուրդդ բարերարը կը հանեմ շուտով,  
Անեղիս մէջ կառնեմ քեզ որպէս բամբակ:

Վալին ասաւ «Ազրայիլն եմ ես հիմա,  
Իսկապէս քո հոգիդ առնելու եկայ.  
Ո՛ւմ վրայ ես դրել յոյսդ, ինձ ասա,  
Ո՛վ դու անբարտաւան, դու գող, աւազակ»:

Անդրանիկը ասաւ «շատ կարճամիտ ես,  
Գիշակեր բորենի, մէկ պարաղիտ ես,  
Անգէն խեղճ հայերուն կոտորել գիտես  
Քաջերու մօտ դու կը դառնաս նապաստակ»:

Վալին ասաւ «արի անձնատուր եղիւր,  
Լսէ թագաւորիդ, զէնքերդ վար դէր.  
Ողջիդ կը դարձնեմ ես հող ու մոխիր,  
Անդադար մէկ ամիս կարձակեմ գնդակ»:

Անդրանիկը ասաւ «լսիր, ով փաշայ  
Մեզ համար մեռնել կայ, յանձնուել չկայ.  
Արա, մի խնայիր, ձեռքիդ ինչ կուգայ,  
Շատ ենք լսել, տեսել մենք քամու տոպրակ»:

Վալին ասաւ «անփորձ մի քանի լամուկ,  
Սրտեր էք պղտորում որպէս կեղտոտ մուկ.  
Ձեզ նման խնթերու պատճառով յատուկ  
Դրախտ Անատօլիան դարձաւ աւերակ»:

Անդրանիկը ասաւ «մեկ հետ լաւ վարուի  
Եթէ շահել կուզես, ինքդ խոնարհուի.  
Մինչև մեր պահանջը ձիշտ չը կատարուի,  
Մենք չենք դառնայ դահին հլու հպատակ:

Վալին ասաւ՝ «ինձ չը կարծես մենակ եմ,  
Զօրք շատ ունեմ, ինչ անցքեր կայ, կը փակեմ,  
Քսան թնդանօթներ մէկէն կարձակեմ,  
Բոլոր խմբերովդ կանցնես գետնի տակ»:

Անդրանիկը ասաւ՝ «ես պիտի կռուեմ,  
Հայրենիքիս սիրու համար թող մեռնեմ.  
Քու հրագէնքերուդ գիմացը ունեմ  
Հրացայտ գործիքներ, պալթող ուժանակ»:

Վալին տեսաւ չեն խոնարհուամ հայերը,  
 Իրանք անվախ, և հատու են գէնքերը,  
 Խրախոսեց, առաջ մղեց քրդերը,  
 Բայց հայերուց կերան կատաղի ապտակ:

Չորս ամիս շարունակ պատերազմ եղաւ,  
 Սար ու ձոր դղրդաց, գողաց, թունդ ելաւ.  
 Թուրքաց կողմից երկու հազար մարդ ընկաւ,  
 Հայերը ունեցան քսան նահատակ:

Վալին փախաւ, գօրքն էլ իրան հետեց,  
 Անարգուած, անպատիւ դէպի Մուշ չուեց.  
 Իջաւ դաշտը անգէն հայոց ջարդ տուեց  
 Տեսաւ սասունցնոց հետ չի լինի կատակ:

Հայերն էլ դիրքերը թողին, հեռացան,  
 Որ թուրքերը անգէն հայոց ջարդ չտան.  
 Յրուեցան ամենը մի տեղ պահուեցան  
 Մինչև որ կը ծագէ մի նոր արեգակ:

Հմուտ կառավարիչ, խելահաս վարպետ  
 Մահից ու կրակից նա չը կեցաւ յետ,  
 Կեցցէ Անդրանիկը ընկերներու հետ  
 Բոլոր աշխարհի մէջ ստացան հռչակ:

Ջիւան, ուժեղի մօտ եթէ խիղճ լինի,  
 Տկարին օգնելը դժուար չի թուի.  
 Տայ Աստուած որ հայոց թեղն էլ էրնւի  
 Անձրե չը գայ, քամին փչէ յաջողակ:

\* \*  
 \*

Պատերազմ կայ Հայաստանում,  
 Հայրենիք սիրողը թող գայ.  
 Թոյլը գործ չունի այս բանում  
 Իւր գլխից անցնողը թող գայ:

Պատերազմի դաշտը սիրուն,  
 Գնանք իբրեւ հարսանեաց տուն.  
 Ողջ անձով մահի վերարկուն  
 Յնծութեամբ հագնողը թող գայ:

Անվախ առիւծի կորիւնը  
 Բնաւ չի քաշուի անկիւնը.  
 Անխիղճ թշնամու արիւնը  
 Ջրի պէս խմողը թող գայ:

Ով կտրիճ է նա է յաղթող,  
 Ուժեղն է ամենակարող.  
 Անվախ, կրակի մէջ մտնող,  
 Քաջի պէս մեռնողը թող գայ:

Ո՛հ, մեր երկիրն է արեան ծով,  
 Պէտք է մտնել հանգիստ հոգեով.  
 Թէ իւր լեզուով թէ իւր գործով  
 Մարդիկ համոզողը թող գայ:

Տեսէք դժողը Տաճկաստանում  
 Դեբը ինչեր են անում.  
 Արեան անեղ աւազանում  
 Նորից մկրտուողը թող գայ:

## ՊԻՏԻ ՀԱՍՆԻ

Դնուդա, սիրունիս, քեզ բարի վիճակ պիտի հասնի  
Մեծ բարերարից պարգև ու պսակ պիտի հասնի.  
Սրտիդ սիրածը, հոգ մի անիր, յետ կը գայ անշուշտ  
Մօտիկ օրերս բաղձալի նամակ պիտի հասնի:

Փափուկ քնարի ձայնովը հոգիդ պիտի հրճուի  
Գողթան մուսաններէն սիրոյ երգակ պիտի հասնի:  
Աներկբայ եղիր փեսայի գալուն, սիրելի կոյս,  
Երկնից ուղիով օդի սուրհանդակ պիտի հասնի:

Քո տխրութիւնը ձմրայնման փոխուելով յանկարծ,  
Չուարձալի օր, քաղցր եղանակ պիտի հասնի.  
Ինչպէս Սառային, Աբրահամին խնդացուց  
Աստուած,

Քոյր իմ, քեզի էլ այնպիսի զաւակ պիտի հասնի:

Մեծ բարերարը արծուի թևերու վրայ նստած  
Եղբայրներովդ քեզի օթանդակ պիտի հասնի.  
Դժողքը, Զիւանի էլի դրախտ պիտի դառնայ  
Չար դէի տեղակ բարի հրեշտակ պիտի հասնի:

## ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ազատն Աստուած այն օրից,  
Երբ հաճեցաւ շունչ փչել,  
Իմ հողանիւթ շինուածքին  
Կենդանութիւն պարգևել:

Ես՝ անբարբառ մի մանուկ  
Երկու ձեռքս պարզեցի,  
Իւ իմ անդօր թևերով  
Ազատութիւն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ  
Օրօրոցում կապկապած  
Հալիս էի անդադար,  
Մօրս բունը խանգարած:

Խնդրում էի նորանից  
Բազուկներս արձակել՝  
Ես այն օրից ուխտեցի  
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապերն  
Արձակուեցան, բացուեցան,  
Մինչ ծնողքս իմ ձայնից  
Խնդացին ու բերկրեցան:

Նախկին խօսքն որ ասեցի՝  
 Ձէր հայր կամ մայր, կամ այլ ինչ,  
 «Ազատութիւն» դուրս թռաւ  
 Իմ մանկական բերանից:

«Ազատութիւն», ինձ կրկնեց  
 Ճակատագիրը վերևից:

«Ազատութեան» դու զինուոր  
 Կամիս գրուել այս օրից:

«Ո՛հ, փշոտ է ճանապարհդ,  
 Քեզ շատ փորձանք կ'սպասէ,  
 Ազատութիւն սիրողին՝  
 Այս աշխարհը խիստ նեղ է:»

—Ազատութիւն,— գոչեցի, —  
 Թող որոտայ իմ գլխին  
 Փայլակ, կայծակ, հուր, երկաթ —  
 Թող դաւ դնէ թշնամին:

Ես մինչ ի մահ, կախաղան,  
 Մինչև անարգ մահու սիւն,  
 Պիտի գոռամ, պիտի՝ կրկնեմ  
 Անդադար—ազատութիւն:

Միք. Նալբանդեան

## Ի Ջ Ե Ն

Ազատութեան այն վառ սէրը  
 Թունդ որոտայ իմ սրտում,  
 Իմ Հայրենեաց սուրբ անունը  
 Ինձ պատերազմ է կանչում:

Ելէք, ելէք, Հայկազունք,  
 Ելէք Հայկաջ զաւակունք.  
 Ելէք, ելէք, Հայ եղբայրներ,  
 Առէք ձեր սուր նիզակներ:

Ահա, եղբայրք, Հայ եղբայրներ,  
 Առէք զդահ, սուր զէնքեր,  
 Մահը դաշտում Շաւարշանայ  
 Մեզ հրաւէր կը կարդայ.  
 Ելէք, ելէք, Հայկազունք, և այլն.

Ա՛խ, հարենիք, սուրբ անունդ  
 Անշէջ վառէ իմ սրտում,  
 Մեր հայ եղբարց շիրիմները  
 Իրանց գիրկն են մեզ կանչում  
 Ելէք, ելէք... Հայկազունք, եւլն:

Այս օրերը մեր քաջ կեանքին  
 Նուիրական թող լինին.  
 Ո՛վ սիրում է ազատութիւն՝  
 Թող չմոռնայ Հայ անուն:  
 Ելէք, ելէք, Հայկազունք, եւլն:

## ԱՐԱՐՈՅԻ ԵՐԴԸ

Գլորող տանի քուրդ Աբոյին,  
Իլաջ մացեր Արաբոյին,  
Հսպաններ է ջօջ ափոյին.  
Զարթիր լաօ մընսիմ քըզի:

Չուր երբ մնամ էլու դոններ,  
Էրթամ գտնեմ զիմ խեղճ գառներ,  
Սուքեմ զիմ բաղչա, զիմ ծառներ,  
Զարթիր լաօ, մընսիմ քըզի:

Դէն իրիշկէ գալող ճրն է  
Քաջ Արաբօ բաղդաւորն է.  
Կարմիր իրիցանց զինւորն է,  
Զարթիր...

Խեղճ մշեցին մնաց լալով,  
Հեռու երկիրնս ման գալով,  
Մեռաւ թուրքի պարտքը տալով,  
Զարթիր...

Ոտքի կախէ կտրիճ Խերան,  
Զօրքով գնա առաջ ուրան.  
Սալլաթ մէհրու բաժին խուրբան,  
Զարթիր...

Սէֆիւ, շիւար մացած Հայեր,  
Էղած անտէր, բնաւեր հաւքեր  
Տէր, դու փրկէ, պահէ արթուն,  
Զարթիր...

## Ի Ղ 2

Ո՛վ աւերակ դարձած բնիկ իմ երկիր,  
Ես քեզ շէն ու ապատ երբ պիտի տեսնիմ.  
Ժողովուրդդ անմխիթար, տարադիր,  
Հալածանքից ազատ երբ պիտի տեսնիմ:

Արդեօք պիտի բացու լին դոններս փակուած  
Իրր դու հարս, մի նոր փառքով պսակուած.  
Բարբարոսներու տեղ հայեր ընակուած  
Գիւղերդ մարդաշատ երբ պիտի տեսնիմ:

Զիւան, խիղճը զարթնի վեհ Եւրոպայի,  
Իւր ձեռքով բարւոքի վիճակը հայի.  
Կրէտէի, Սերբիոյ Բուլղարիայի  
Քեզ նրանց համեմատ երբ պիտի տեսնիմ:

## ԱՐԵԳԱԿ

Ի՞նչ եղար, մէկ դուրս արի, հայոց արեգակ  
Ի՞նչ եղար,  
Թողնելով որդիքներդ խաւար մութի տակ,  
Ի՞նչ եղար,  
Բաւականին ժամանակ է հեռանալդ մեղանից  
Աւրում կնք առանց լուսոյ այսքան ժամանակ,  
Ի՞նչ եղար:

Մասնաւոր շառաւիղդ մօտ տարիներս ցոյց տուիր  
Ազգի մէջ բարձրացուցիր աղմուկ, աղաղակ,  
ի՞նչ եղար:

Քո դիւցազուն, անարատ մանուկներդ այսքան  
տարի

Սաւարի որդիքներուն թողիր հպատակ, ի՞նչ  
եղար:

Սառեցաւ մեր արիւնը ցուրտ հողմային պաղու-  
թիւնից

Եկ հասիր, լոյս ջերմարար, կենդանի կրակ, ի՞նչ  
եղար:

Բալկանեան լեռներուց նոր դուրս գալող արեւի  
պէս

Մէկ դուն էլ խղճի արի ցոյց տուր նշանակ ի՞նչ  
եղար:

Ափսոս ենք մենք, խղճա մեզ, ազնիւ լուսարար  
թագուհի

Ընծայէ մանուկներուն արժանի պսակ ի՞նչ եղար,  
հեանք կուտան ողջ հայերը, Զիւանին էլ բեզի  
համար.

Դուրս արի պայծառ լուսով ազատ, համարձակ  
ի՞նչ եղար:

## Յդի հայաստանը

Հայաստանը յդի է, ծնածը արու է, աղջիկ չէ,  
Հարազատ հայր ու մայր ունի, մանուկը խեղճ  
ու որբիկ չէ.

Հասակով նոճի է հաստատ, տգեղ, գաճաճ ու  
կարճիկ չէ.

Հայեր, հաստատ մնացէք, յոյսերդ ճիշտ է, խա-  
բուսիկ չէ.

Ասածս ուղղութիւն է, հասկացիր ով մարդ,  
կրետիկ չէ

Մեր ազգը դեսպանաց մօտը թեթեւ, անմիտ  
խաղալիք չէ:

Հայաստանի ծնած որդին հարազատ Հայկայ զա-  
ւակն է.

Բժիշկը մեր սուսաց Կայսրն է, պահպան և  
հրեշտակն է.

Վեհափառ Անգլիայի թագուհին էլ մամը, դայակն է.  
Հեռատես Գերմանիան, կնքահայրը լաւ օրինակն է.

Հայաստանը յդի է, ծնածը արու է, աղջիկ չէ  
Հարազատ հայր ու մայր ունի մանուկը

խեղճ ու որբիկ չէ:

Մանուկի վարժարանը, վարժապետը քաջ  
Ֆրանսա է,

Նրան վկայական տուողը կարծեմ Իտալիա է.

Հոգաբարձուն Պօլիս է, այլալիքս մեծ խալիֆա է  
Երեխայի մօրաքոյրը, հօր պաշտպանը Վիեննա է,

Հայաստանը յդի է, ծնածը արու է աղջիկ չէ,  
Հարազատ հայր ու մայր ունի, մանուկը

խեղճ ու որբիկ չէ:

Զիւան, աշխարհ չեկած մանկան ձեռը սուր ու  
հրացան կայ.

Արեւելքէն, Արեւմուտքէն, Հիւսիսէն մեծ հրաման  
կայ,  
Ծածը ուշ կը ծնի, առիւծ է, միջոց ու պայման  
կայ.  
Լրիւ եօթը ամիս, երկու շաբաթ և տասը վայրկեան  
կայ.

Հայաստանը յղի է ծնածը արու է աղջիկ չէ  
Հարազատ հայր ու մար ունի, մանուկը  
խեղճ ու որբիկ չէ:

1895.

## Հ Ո Վ Ի Տ

Հովիտ եղեմական բո դուռդ մեզ փակ է փսոս,  
Օտար ցեղերուն ճանապարհդ արծակ է փսոս.  
Քո մէջը բնակւողը օտարի դաւակ է փսոս,  
Դիրքդ գեղեցիկ, բայց քաջածդ կրակ է փսոս,  
Օրդ խաւար է, արեդ ամպի տակ է փսոս:

Այդպէս կը մնաս, ծաղկալի բուրաստանը կեանքիս,  
Հոգոյս տաճարը, պաշտելի սրբատունը կեանքիս,  
Հաստատ մնայուն աստուածաշէն խորանը կեանքիս,  
Օրս, արևս, անուցիչս, որրանը կեանքիս,  
Ամբիժ անունդ խուժ—դուժի նշաւակ է փսոս:

Մնաց սեւերես այլցեղի քեզ փոխարինողը.  
Քո որդոց համար է յօրինել քեզ յօրինողը.  
Դրախտի անունով է հիմնել, հաստատել հիմնողը,  
Նորից կը շինէ և նորոգէ Աստուած է շինողը,  
Քեզ վերայ տիրող արքայ ու իշխան չը լինողը  
Այլոց դրանը ծառայող է, մշակ է փսոս:

Որդին հարազատ մօրիցը անջատելը մեղք է.  
Իւր որդու տեղը օտարին հաստատելը մեղք է.  
Իրա տանը մէջ տանջուելը, նախատուելը մեղք է.  
Ազատ խօսելու համար յարաժամ անարկուելը  
մեղք է.

Ծառը սովորած կլիմայից զատերը մեղք է  
Խնդիրը խօսածս մտած հակառակ է փսոս:

Զարթիր, տիրուհի, ննջելու ժամանակըն անցաւ  
Այնքան քնեցար, վրայիդ արեգակըն անցաւ  
Տես, զարնանային գեղեցիկ եղանակըն անցաւ  
Գալով ձմեռն՝ աշխատութեան վաստակն անցաւ  
Լսիր Զիւանուս, ողբալու նշանակըն անցաւ  
Լացդ ուրիշին ծաղրելի է, կատակ է փսոս:

## ՀԱՐԱԻԻ ՄՐՄՈՒՆՁԸ

Քոյրերիս մէջ միշտ սգազգեաց ինձ նման տը-  
խուր չկայ.  
Դժողբումն էլ իմ ունեցած կրակիս պէս հուր չկայ.

Ծարաւ, պապակ այրըւում եմ, ոհ, մի կաթիլ  
ջուր չկայ  
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր  
չկայ:

Իմ տարիքս անցնում են շուտ, գլորւում են հա-  
նապաղ  
Ա՛խ իմ յոյսս, իմ փափագս կը համարուի միշտ  
երազ

Որտեղ ձայն ու շարժում լսեմ կը վազեմ այն-  
տեղ վազ  
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր  
չկայ:

Զէ՞ք իսկապէս Հարաւն եմ, ինձի օգնէ քաջ Հիւսիս  
Քեզ եմ տուել եմ Ախուրեան, իմ անառիկ մեծ  
Մասիս

Ե՞րբ կը լսեմ աւետեաց լուր, ուրախութեան  
աւետիս.

Սպասում եմ այցելութեան ոչ մի տեղից լուր չկայ:

## ՉՈՒՆԻՆՔ

Օտարներից գանգատուելու հայերս իրաւունք  
չունենք,  
Որովհետեւ համերաշխ գործ, մի որոշ սկզբունք  
չունենք.

Բարի բաներ արտասանող մաքուր բերան, շըր-  
թունք չունենք.

Խախուտ է մեր դրութիւնը, հաստատապէս հի-  
մունք չունենք.

Իրար հետ մեզ սիրով կապող լաւ կրթութիւն,  
ուսմունք չունենք

Հաւատ ունենք, յոյս էլ ունենք, ափսոս, սիրոյ  
մասունք չունենք...

Աշխարհի ամեն անկիւնից ստանում ենք բռթալի  
լուր.

Այս ինչ հային սպանեցին, կամ թէ տունը գցե-  
ցին հուր.

Աւելանում ցաւերս տարեցտարի, օրն ընդհանուր.  
Մեր մամուլն էլ ուրախութիւն չունի, միշտ  
գրում է տխուր.

Աւարառու գողերի դէմ անգամ մենք չենք վեր-  
ցնում սուր.

Կարծես սրտերս մեռած է կամ թէ թե ու թի-  
կունք չունենք:

Ով որ ասես մեզ թոթւում է անայգեպան ծառի  
նման.

Գայլերուն բաժին ենք դառնում առանց հովիւ  
գառի նման.

Հազար մի վաճառորդ ունինք իւզալի պառառի  
նման.

Ափսոս, մենք մեզ չենք հասկանում աչքը կապած  
ցառի նման

Քայլերս միշտ խոտորնակ է գնում խեղափառի  
նման,  
Ճանապարհներս ուղղելու վարժուած ոտ ու սրունք  
չունենք:

Ո՛վ Զիւանի, համեստութեան տաճար էր հին Հա-  
յաստանը,  
Մեր գեղեցիկ սեռն կը պահում, լեղուն, հայու-  
թեան նշանը,  
Բայց հիմա շատ ցաւալի է, փոխուել է փութսի  
բերանը  
Քիչ է ճարուում Այծեմիկի և Կարինէի նմանը.  
Մեր կանանց վարքն էլ է փոխուել, կարծեմ է  
չեն առաջուանը,  
Տնտես, բարի, սակաւապետ համեստ մայր ու  
հարսունք չունենք:

## ԶԷՅԹՈՒՆԻ ՄԱՐՇ

Մեր գործերը, խորհուրդները հայրենիքի սէրն է.  
Մեր կեանքերը, մեր կայքերը հայ ազգի հուէրն է.  
Ժառանգը՝ պապի և հօրը կալուածներու տէրն է.  
Այսքան տարիներ վիշտ, նեղութիւն  
տանողը մենք ենք  
Ել չենք դիմանար, թշնամու դէմ կանգ-  
նողը մենք ենք:

Մեր նախնիքը անկախ հողի մէջ կապրէին ազատ,  
Ո՛վ որ լսում էր հայ անունը, դողում էր հաստատ  
Մարդիկը նրանք չեն, արիւնն հոգին է հարազատ,  
Այսքան տարիներ վիշտ, նեղութիւն  
տանողը մենք ենք  
Ել չենք դիմանար, թշնամու դէմ  
կանգնողը մենք ենք:

Արի՞նք ու սուր է և կրակ է մեր դրօշակը  
Մեռնելու համար վախ չունի մեր քաջահատակը  
Առի՞ծ կը լինի խեղճ հայը երբ առնի նիզակը  
Այսքան տարիներ վիշտ, նեղութիւն  
տանողը մենք ենք  
Ել չենք դիմանար, թշնամու դէմ  
կանգնողը մենք ենք:

Մենք չենք վախենար թնդանօթից եթէ ունենք  
ջանք  
Մեռնենք՝ կը գնանք արքայութիւն, այնտեղ է  
լաւ կեանք.  
Ինչքան վախեցանք մեռնելուցը, կենդանի մեռանք,  
Այսքան տարիներ. վիշտ, նեղութիւն  
տանողը մենք ենք.  
Ել չենք դիմանար, թշնամու դէմ  
կանգնողը մենք ենք:

## Հ Ե Ի Ը

Բոլոր թռչունները թե առան թռան  
Ամենից հին խօսուն հաւը չը թռաւ.  
Յետ ընկած հաւքերը բնի տէր դառան  
Մնաց թմրած, անքուն, հաւը չը թռաւ:

Մասնաւոր թեք թափ տալու մասին  
Խղճալուն մահացու բրով ծեծեցին.  
Ուրուրի ճուտերը թափուեցան գլխին  
Նրա համար սիրուն հաւը չը թռաւ:

Մեծ կորուստ ունեցաւ հեղեղից, ջրից,  
Մանաւանդ ուրուրի մահաբեր սրից  
Չագերն ելան փախան բնիկ երկրից  
Կարկատեց շինեց բուն, հաւը չը թռաւ:

Ջիւանի մեծ աքլոր, պահապան չունէր,  
Կղզիացած կապրէր, նա շրջան չունէր.  
Թռչուններու մէջը ազգական չունէր  
Համեստ բարի խաթուն հաւը չը թռաւ:

1901

## ԽՂՃԻ ՎԻՃԱԿԸ

Ծեծուած ու ջարդուած, հալածուած ազգը  
Ոչ մի մխիթարանք, սփոփանք չունի.  
Սփիւռս աշխարհի տարածուած ազգը  
Հայրենիք դառնալու ճիգ ու ջանք չունի:

Տանում է զրկանքը անխօս, լուռ ու մունջ՝  
Ա՛խ է քաշում սրտից, հանելով մրմունջ  
Չարհարում է այլոց համար անտրտունջ  
Խեղճը իրան համար աշխատանք չունի:

Տէր Աստուած, կոտորուած սրտերը շինէ  
Վատ օրերուն լաւ օրեր փոխարինէ.  
Ինձ ասում են ուրախ երգեր յօրինէ  
Մտածում եմ, հայը ուրախ կհանք չունի:

Ջիւան, հայը իւր կրօնը չի թող տալ  
Ուզում է հայ ապրել, յաւէտ հայ մնալ.  
Բնաւ նա մի ազգի վատ չի կամենալ  
Իւր մէջ զրպարտութիւն, պարուրանք չունի:

1897

## ԱՆՑԵԱԼԻՑ ԵՒ ՆԵՐԿԱՅԻՑ

Բուլղարները Ռուսին են պարտական  
Որ այսօր իբրեւ ազգ գոյութիւն ունին.  
Վաղուց մտած կը լինէին գերեզման  
Ոտից կոխան դարձած ամենի թուրքին:

Բորբոքուեց սլաւեան մեծ ցեղի հուրը  
Ալ արիւնով ներկեց ցամաքն ու ջուրը,  
Հզօր Արծուի ուժեղ ահարկու սուրը  
Կատաղի բորենուն տապալից գետին:

Ծախսեց երկու հազար միլիօնի ստակ  
Տուեց քառորդ միլիօնի էլ նահատակ.  
Փրկուած ազգերը ամեն ժամանակ  
Թող օրհնեն ու գովեն քաջ հերոս ազգին:

## ԱԼ ՈՒ ԱԼԻԱՆ

Ալ ու ալւան ես հազել,  
Կարմիր լալայ ես դառել.  
Սուրայի կըլոր մէջքըդ  
Փամփուշտներով ես ծածկել:  
Ախպէր ջան, քեզ դուրպան.  
Դո՛ւ ես, դո՛ւ մեր գուման:

Ձեռքըդ թըվանք ես առել,  
Դուշմանի դէմ ես կանգնել,  
Ինձ արմա, գըլխիդ մատաղ,  
Բինիշըդ թ՛վ է կարել:  
Ախպէր ջան, քեզ դուրպան,  
Դո՛ւ ես, դո՛ւ մեր գուման:

Ասիւծի պէս կանգնել ես,  
Բեխերդ ոլորել ես,  
Սև, թուխ բեխերիդ մատաղ,  
Յաղթանակը տարել ես:  
Ախպէր ջան քեզ դուրպան,  
Դո՛ւ ես, դո՛ւ մեր գուման:

Գ. Տալեան

## ԱՆԲԱԺԻՆՆԵՐ

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,  
Օր ու արև չը տեսանք,  
Վճիխ, մեր կեանքը սևով անցաւ,  
Աշխարհից բան չիմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն, կխմեն  
Աշխարհի ճոխ սեղանից,  
Մենք աշխարհի խորդ-որդէքն ենք,  
Մեզ փայ չկայ աշխարհից:

Խեղճ աղքատի հողին դուրս գայ,  
Քարից-հողից հաց քամէ,—  
Բեռով հացը հարուստին տայ,  
Հարուստն ուտէ, վայելէ:

Խեղճ աղքատը դառը դատի—  
Դատարկ նստի... Էյ, աշխարհ,  
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում  
Քարի վրայ, քար աշխարհ...

Ա. Դստնակեան

## ՀԱՅԵՐՈՒՍ ԲԱՂՁԱՆՔԸ

Ա՛խ, ինչպէս կ'ուզեմ տեսնել մեր հային  
Ազատ, ապահով, կրթեալ, ինքնագոհ

Ամեն հայի տուն—դրախտ երկնային...  
 Լոկ այդ բանն ինձնից չուզենար մէկ զոհ:

Ա՛խ, ի՛նչպէս կ'ուզեմ տեսնել Հայաստան  
 Մի օր ազատուած թըշնամու ձեռքէն,  
 Հայի երկիրը հայի սեփական...  
 Լոկ այդ չը բաժնէր ինձ իմ կօպէկէն:

Ա՛խ, ի՛նչպէս կ'ուզեմ որ մեր հայերուն  
 Արծարծուէր սէրը ուսման, գիտութեան,  
 Հայի մէջ չի մնար մի հատիկ անուն...  
 Լոկ հեռու ինձնից թուղթ ստորագրութեան:

Ա՛խ, ի՛նչպէս կ'ուզեմ որ հայ պատանիք  
 Իէպ համալսարան խումբով վազէին,  
 Եւ Զուիցերիա երթար հայ աղջիկ  
 Լոկ ինձնից նոքա կօպէկ չուզէին:

Ա՛խ, ի՛նչպէս կ'ուզեմ, որ մեր Զէյթունցին  
 Միթևայլեօզ, շասպօ, ումըկէն ունենար,  
 Զարդ ու փուրդ անէր քուրդ ու չէրքէզին...  
 Լոկ ինձնից զէնքի նա փող չուզէինար:

Երբ մեր հայրենիք հրաշքով ազատու՛ր,  
 Մերոնք էլ ազատ կեանք օր վարէին,  
 Ա՛խ ի՛նչպէս, ի՛նչպէս, լաւ բան կը լինէր՝  
 Երբ հայը ինձ իրանց իշխան ընտրէին:

## ՀԱՐՍՆԵՐԳ

Առաւօտուն բարի լուս,  
 Աստուած պահէ ամենուս  
 Թող դուրս գայ թշնամուս  
     Լճրիկ, լճրիկ, լճրիկ, լճրիկ,  
 Թող դուրս գայ թշնամու լուս  
     Լճրիկ, լճրիկ, լճրիկ, սիրուն լճրիկ  
     Լճրիկ, լճրիկ, լճր իմ, լճու լճրիկ:

Հազար երնէկ էն աւուր  
 Տաւուլ զո՛ւնա Հալեցուցին,  
 Կանաչ կարմիր հաղեցուցին,  
 Տարան ժամը կայնեցուցին,  
 Աւետարան կարդացուցին,  
 Ձեռը ձեռին տըւեցուցին  
     Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ...  
     Լճր իմ, լճրիկ, սիրուն լճրիկ,  
     Լճրիկ, լճրիկ, լճր իմ, լճու լճրիկ:

Առաւօտուն բարի լուս,  
 Բարե ասա բարեուս,  
 Բարե հասնի արեուս:  
 Առաւօտուն բարի լուս,  
     Արե ելաւ սարի ուս,  
     Արի, երթանք դար ի դուս:

Առաւօտուն բարի լուս,  
 Աստուած պահէ մեր երկուս  
 Լո՛ւ, ոսկի իմ հոգուս:

## Հ Ա Յ Ե Ր Ս

Ա՛խ, չունինք տէր ապաւեն, բացի Աստուած,  
 հայերս,  
 Ամեն աշխարհք ցրուած ենք լայնատարած հայերս.  
 Ոչ օգնական, ոչ ցաւող և ոչ մի պաշտպան ունինք.  
 Ողջ աշխարհից մոռացուած խեղճ արարուած հա-  
 յերս:

Ինչո՞ւ պիտի մեզ ատեն արդեօք հզօր ազգերը,  
 Մինչև հիմա չենք տուել մէկին կասկած հայերս.  
 Արեւ միշտ չի ֆնայ ամպի ու ստուերի տակ  
 Կը գայ մի օր չենք ֆնալ նրանցից ցած հայերս:

Չորս հազար տարի պահող Տէրը կրկին կը պահի.  
 Շատ ենք տեսել այսպիսի դառն արկած հայերս:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ

Մոռանալ անկարելի է, անուշ կեանքս Հայաս-  
 տանն է,  
 Բոլոր սրտից ու խոր մօքից հառաչանքս Հայաս-  
 տանն է.  
 Հազար տարիներէ ի վեր իմ ապրանքս Հայաս-  
 տանն է  
 Թէ ցերեկ և թէ գիշեր քաշած տառապանքս Հա-  
 յաստանն է:

Վերև Աստուած վարը դուք էք որբերուն Տէր  
 բարերար,  
 Վաթսուն և մէկ յօդուած բաւ է պահէք անկատար,  
 Լուսաւոր աղգեր լսեցէք, ձեզի աղա-  
 չանք ունի,  
 Ապրելու միջոց տուէք, մեռնել չի ու-  
 ղեր, կեանք ունի:

## Հ Ա Յ Ո Յ Բ Ա Խ Տ Ը

Անոյժ, ձմրան արև դարձաւ վառարանը Հայոց  
 բախտին,  
 Ձիւնով ծածկուած սարի պէս է տեսարանը Հայոց  
 բախտին.  
 Մի կողմից սառնաշունչ հողը, մի կողմից խոր-  
 շակը անգութ  
 Բերանը բաց նայում է խոր վերեզմանը Հայոց  
 բախտին:

Շարունակ սրտաճմլիկ վէրք ու ցաւ է պտուղը  
 գրչին,  
 Տխուր, տրտում ու թախծոտ է վիպասանը հա-  
 յոց բախտին:  
 Լսել է քաղցրախօս հաւը, չի երգում անուշիկ  
 երգը  
 Սգոյ օթևան է դարձել բուրաստանը հայոց  
 բախտին:

Տալիս է ոյժ, զօրութիւն նեղ օրերում այդ ժո-  
 ժովրդին  
 Հօր է ամենաբարձրեալ Ապաստանը հայոց  
 բախտին:  
 Զիւանի, խաչի հետ լուսնին դատաւորը պիտի  
 կանչէ  
 Մօտիկ է, շուտ լինելու է դատաստանը հայոց  
 բախտին:

## Չ Կ Ա Յ

Ցաւալի, պանդուխտ հային տուն գնալու հնար  
 չկայ  
 Պատել է թանձր խաւարը, մութն է, ճանապարհ  
 չկայ:  
 Հիւսիսի մեծ Արծիւը պէտք է սլանայ օդի մէջ  
 Պատառէ մութն ու խաւարը, սա է, ուրիշ ճար  
 չկայ:  
 Ընդունակ է, շնորհք ունի մաքուր ցեղը հայկա-  
 ղեան:  
 Նախանձում են որոշ մարդիկ, բայց են անում  
 մութ բերան:  
 Բացի օգտից ոչ ոքի փնաս չի հասել նրան,  
 Եթէ քննես, մարդկութեան մէջ հայի պէս խո-  
 նար չկայ:

Կտրիճ է, բայց դէնք չունի ընտիր հայի քաջ  
 զաւակը  
 Մինչև անգամ խլում են ձեռքից հասարակ դա-  
 նակը:  
 Թիւրքի ու քիւրդի համար է, իրանը չէ վաստակը  
 հայի աշխարհից էլ թշուառ, տարաբախտ աշխարհ  
 չկայ:

## Մ Ե Ծ Ք Ե Ռ Ի

Քո քրոջդ զաւակներուն ցաւի, խղճա՛, մեծ քեռի.  
 Նրանց մէջը ջանք ու եռանդ քանի կեանք կայ,  
 մեծ քեռի:  
 Նայիր այժմ բարի աչքով նրանց վրայ, մեծ քեռի  
 Խնդրում եմ քեզ, աղաչում եմ, ով տէր արքա  
 մեծ քեռի:  
 Խղճալի որբիկներուն մի քիչ խղճա՛, մեծ քեռի:  
 Մարտիրոսուած ու հալածուած մի ազգի յիշա-  
 տակ են  
 Կրակից ու սրից պրծած կենդանի նահատակ են  
 Մեր հաւատին հակառակ, անխիղճ մէկին հալա-  
 տակ են  
 Շարունակ մեծ անունդ կուտան, քեզի կողադակեն  
 Խնդրում եմ քեզ, աղաչում եմ, ով տէր արքայ մեծ  
 քեռի  
 Խղճալի որբիկներուն մի քիչ ողորմա՛, մեծ քեռի:

Սըրբուհի մօրաքրոջս որդիքը ազատ եղան  
 Քու շնորհիւ, ով մեծ քեռի, երանելի կեանք  
 ստացան  
 Բախտաւոր կին են դառել Բուլղէնը, սիրուն  
 էլեան,  
 Հայկուհին ու Մարիամը դեռևս արին կուլան,  
 Խնդրում եմ քեզ, աղաչում եմ, ով տէր արքայ  
 մեծ քեռի,  
 Խղձալի որբիկներուն մի քիչ ողորմա, մեծ քեռի:  
 1901

## ՀՐԱԽԷՐ ՄԱՐՏԻ

Բամբ, որոտան բարձուստ բոմբիւնք Սրարատեան  
 դաշտն ի վար  
 Արի արանց արինք յիռանդ առատանան ի հրաղայր  
 Հրաւէր հայրենեաց հռչակի նդհանուր,  
 Հոգիք հայկազանց բորբոքին ի հուր,  
 Որք երկնաւորին պսակին էք կարօտ,  
 Որք երկնաւորին փառաց երկնայորդ,  
 Հապ' զն, արի արանց մանկունք,  
 Հայրենավրէժքդ Հայկազունք.  
 Հապ' զն, ի զէն գունդազունդ,  
 Յեռեալ ի պար թունդ ի թունդ  
 Ի զէն ի վրէժ, զն անդր յառաջ,  
 Ի զէն ի վրէժ, մի ձախ, մի յաջ,  
 Օն անդր յառաջ,  
 Մի ձախ մի յաջ,

Օն անդր յառաջ  
 Յառաջ յառաջ,  
 Հապ' զն յառաջ:  
 Հայկեան փանդոտանց որոտընդոստ դռնէին բար-  
 բառք մարտագոռ,  
 Դառնագոռոջ անդրաձայնէ Պարսիկ կերկերն ի  
 շեփոր

Շարժեն հրեշտակը թևս լուսափողփողս,  
 Ճիւղաղը ճուճաղաց կայտունն ի դրժոխս  
 Շոխդըն շանթառաք զեթեօք փարի,  
 Սարսափին սանեարք ի Խօլ խաւարի:  
 Հապ' զն, արի արանց մանկունք, են:  
 Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշն հայերս գող ծալ  
 ի ծալ  
 Ի ճակատուց ի թըշնամեաց սա ոչ գիտաց յուրաս-  
 տըկալ

Հեծեալ հրանժոյգ վեհին Վահանայ'  
 Վրէժ կանչէ արեան կարօիր Վարդանայ,  
 Փռնչեալ բոցաշունչ գափր ի գարշապար.  
 Ռազմամուտ վարդի յայնժոյժ երիվար:  
 Հապ' զն, արի արանց մանկունք, են:  
 Հ. Ղ Ալիշան

## ՀԱՅԴՈՒԿԻ ԵՐԳ

Երբ ես մեծացայ, տղամարդ դարձայ,  
 Ու սիրտըս զընաց սիրով վառ-վառման,  
 Ուզեցի սիրել աղջիկ սեռահայ,  
 Բայց դու գիրկս ընկար, անգին հըրացան:

Ու բոց կարօտով գլրկեցի ես քեզ,  
Սեղմեցի կրծքիս, անգին հըրացան  
Իմ սրտի տէրը,—հարսնացուս դարձար,  
Աննհնգ ընկերս, իմ սէր հըրացան:

Երբ թշնամու դէմ կռուի եմ վազում,  
Դո՛ւ՛ կրծքիս սեղմած՝ անբաժան հետս ես.  
Դո՛ւ ես միշտ սրբախ մըրիկը յայտնում,  
Քեզնով եմ փնտրում, որոտում վըրէժ...

Եւ երբ ես դադըրած գլուխս դնեմ,  
Կռուի դաշտերում, կ'ուզեմ որ փորեն  
Քեզմով ինձ մի փոս՝ կռուի ընկերներ,  
Քեզ հետս թաղին, իմ հարս, իմ ընկեր...

## ՄԵԵՅՈՑ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Երբոր մայրը երկունքով  
Աշխարհ բերէ երեսայ,  
Հայրը որդուն մի սըրած  
Պիտի դաշոյն տայ ընծայ:

Երբ երեսան մեծանայ,  
Խաղալիքներու փոխան՝  
Հայրը ձեռքը պիտի տայ  
Մի մահաբեր հըրացան:

Երբոր տըղին վարժատուն  
Գայ ժամանակ երթալու,

Նախ սուր խաղցնել և ապա  
Պիտ՝ սորվեցնենք կարգալու:

Կարգալ, գլրել լաւ բան է...  
Բայց որ հասաւ քննութիւն՝  
Աշակերտին հարցուցէք—  
Վոթել գիտէ՞ նա արիւն:

Լոկ դուք այսպէս յուսացէք  
Փըրկել խղճուկ Հայաստան,  
Ազատ, անկախ մարդ երբէք  
Լինելու չէ մուրացկան:

Գամառ-Բաթիպա

## ԶԻՆՈՒԱԾ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ . . .

Զինուած, պատրաստուած, Զէյթունի քաջեր,  
Սուրբ ազատութեան վկայք անվհեր.  
Վրէժով լցուած առիւծի նման  
Քաջ-քաջ կռոււմ են թուրքի դէմ դաժան:

Կեցցէք, դուք միշտ Զէյթունցիք,  
Որ պիտ' փրկէք հայրենիք,  
Դուք Հայաստանի պարծանք,  
Մեր կեանքիցն էլ ձեզ կը տանք:

Մանուկն օրօրոցում հանգիստ չէր պառկած,  
Խնդրում էր մօրից՝ օրազուկներս բաց...

«Ես չուզեմ մնալ այս օրօրոցում,  
Մինչ իմ եղբայրներ լաց կոծ են անում»...  
Կեցցէք դուք միշտ Ձէյթունցիք,  
Որ պիտ' փրկէք... Լն։

Ի՞նչ ես կաշկանդել, քանդիր ինձ, մայրիկ,  
Ես կ'ուզեմ կռուիլ թուրքի դէմ ճարպիկ,  
Տուր ինձ հրացան և մի սուր դաշոյն.  
Ես կ'ուզեմ ծծել կաթի տեղ արիւն:  
Կեցցէք դուք միշտ Ձէյթունցիք Լն։

## ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՐՇԸ

Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն,  
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում,  
Անդրանիկը քաջ իւր ընկերներով,  
Կ'ուզէ պատերազմ, կ'սպասէ գարնան:

Մօտ է գարունը, շուտով կը բացուի,  
Հայու խօսքը քաջ շուտով կը լսուի,  
Հայերը անվախ հոգւով միացած  
Հրացան ուսերնին ոտքի են կանգնած:

Խմբապետները հոգւով են կանգնած.  
Ֆիդայի ուժով գնում են առաջ.  
Առաջ է կանգնած Անդրանիկը քաջ,  
Գոռում է գոչում, կ'ուզէ պատերազմ:

Մենք Հնչակեան, եղբարք, դուք Դաշնակցական,  
Մենք երկուսս էլ կուլանք վիշտը հայկական.  
Արիք վճռենք, հոգւով սրտով միանանք  
Ձեռք ձեռքի տանք, ապա գործենք արշաւանք:  
Արիք, եղբայրք, Լն,

Մի նպատակ և մի վսեմ գաղափար  
Մեզ կ'սպասեն անհամբեր ու անդադար  
Ուխտենք. եղբայրք յայտնենք սրտի միութիւն,  
Միութիւնով պիտի գտնենք փրկութիւն:  
Արիք, եղբարք, Լն:

## ԱՐԽԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Ես եմ ազատ հայ պատանի,  
Աշխարհս են այս լեռները.  
Սուրս է միայն իմ սիրելի:  
Եւ ընկերըս սուսերը:

Իմ զարդերըս են այս գէնքերը,  
Եւ թանք ոսկիս փամփուշտներ,  
Անկողիս կանաչ մարգեր,  
Փափուկ մաքուր պատուական:

Ապաստանս ժայռ քարերը՝  
Եւ հայելիս ջինջ վտակ  
Բնակարանս անտառները՝  
Եւ լապտերս վառ լուսնակ:

Ես պարծենալ չեմ կարող չեմ  
Որեւիցէ ուսումով,  
Միայն գողտրիկ եգել գիտեմ,  
Եւ զէնք շարժել սուրը սիրով:

Խմբապետ եմ հայ խումբի մը  
Չարդարուած լաղ զգեստով,  
Յանուն ազգիս կուռւմ եմ ես  
Քաջարի ընկերներով:

## ԷՅ ԶԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Էյ ջան հայրենիք, ինչքան սիրուն ես,  
Սարերդ կորած երկնի մովի մէջ,  
Զրերդ անուշ, հովերդ անուշ,  
Մենակ բալէքդ արուն-ծովի մէջ:

Քու հողին մեռնիմ, անգին հայրենիք,  
Ախ, քիչ է թէ ո՞ր մի կեանքով մեռնիմ,  
Երեւել ունենամ հազար ու մի կեանք,  
Հազար էլ սրտանց քեզ մատաղ անեմ:

Ու հազար կեանքով քու դատին մեռնիմ,  
Բալէքիդ մատաղ, մատաղ քո սիրուն,  
Մենակ մի կեանքը թող ինծի պահեմ:  
Էս էլ քու փառքի գովքը երգելուն:

Աւ. Խսահալեան




Աղդամիկ



Բ ե ո ի



Համազասպ



Բաճնի եւ Դալիբարայի կոի ներում հայ Փիղալիներ



Կարիճ թումանը եր կաճած



Քեյթնի տարանցիկ մի տեսարան

Ու արտուտի պէս վեր ու վեր ճախրեմ,  
 Նոր օրուայ ծեղիդ, աղիդ հայրենիք,  
 Ու անհշ երգեմ, քարցր ու զիլ գո՛վեմ,  
 Կանաչ արևդ, անգատ հայրենիք:

## Տ Ա Ր Ա Գ Ի Ր

Ընդ աստեղօք օտար ափանց  
 Տարագրելոյս չիք բերկրանք.  
 Լըքեալ հողւոյս, յոյս հայրենեաց  
 Դու ես միայն ըսփոփանք:  
 Օտար աստղեր լոյս չունին,  
 Օտար երկիր ինձ մըթին:

Օտար բոյսեր դառն ու անհամ,  
 Զըրեր պըղտոր ու լեղի.  
 Դաշտք, անապատք, հովիտք, արտեր,  
 Ու պարտէզներն անբերրի:  
 Օտար ծառեր շուք չունին,  
 Օտար ծաղիկք հոտ չունին:

Օտար երկիր երջանկաբեր՝  
 Ծանր այդ պայսան ինձ համար.  
 Զիւն ձըմեռ են իւր գարուններ՝  
 Զունի երբէք ինձ ամառ:  
 Օտար երկինք ամպոտ են,  
 Օտար սըրտեր անգութ են:

Թէև օտար շընչեմ ես օդ,  
 Յաւօք սնահին իմ օրեր,  
 Քեզ, Հայաստան, սիրակարօտ  
 Սիրտըս համայն քեզ նուէր:  
 Օտարութիւն փուշ ես դու,  
 Այլ հայրենիք, վարդ ես դու:

## Ե Ր Ք

Թէ իմա ալևոր հերքս սենային,  
 Ոյժս ինձ հետ գար, կըտրիճ դառնայի.  
 Նըժոյգ ձի նըստած, պիտեսրս ոլորած,  
 Ձեռքս թուր առած ես դաշտ կ'երթայի:

Ես դաշտ կ'երթայի, դաշտ Աւարայքի,  
 Ողողած, ցողած Հայոց արիւնով,  
 Ազգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,  
 Քու կորցրած թաղը քեզ յետ կուտայի:

Կ'ասէի Հայոց օրիորդներին.  
 Ծախեցէք հագի ձեր թանգ շորերը,  
 Թողէք պաճուճանք, զարդ մարդարիտներ,  
 Ժանգոտած ու գուլ են մեր թըրերը:

Տուէք բեհեղեայ մեզ ձեր շապիկը.  
 Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը,  
 Ղիրակապ հիւսէք դուք ձեր մազերից:  
 Այսպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը:

## Ա Ղ Օ Թ Ք

Աստուած իմ, նոր հողի տուր թող զօրանան  
 տկարները.  
 Մեղսալից շըջանի մէջ չը ընկճըւեն արգարները  
 Լնկած ու որբ ազգերուն, Տէր իմ պահապան  
 դադանագէտ  
 Գայլերու ոհմակներուց ազատ արա ոչխարները:

Աղաչում եմ, սու, Տէր իմ, անգութներուց զօ-  
 րութիւնը  
 Թող չը ծաղրեն քո հօտգ ամբարտաւան լիմարները.  
 Չորածած, փթած կոճղի ստուերի տակ ապրելով,  
 Բարձրուղէշ, նըբահատակ ծառ չեն լինի դալար  
 ները:

Ձկնապանները, Տէր իմ, քեզնից գիտութիւն տա-  
 նիլով

Անհեղիւր անհատ եղան ուսում Հառած անհատները.  
 Փրկի, Տէր, քո հնազանդ ծառաներդ անգութ-  
 ներից

Թող չը իշխեն լուսաւոր մարդկանց վերայ խա-  
 ւարները:

## ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրև արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ  
Թշուաջնում ես երկինք գետինք տենչաւառ,  
Քաջ անունդ պիտի յիշուի դար է դար,  
Հըսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանիկ:

Թշնամիներ երբ լըսենք քո անունը,  
Օձերի պէս պիտ սողան իւրեանց բունը.  
Երակներիդ աղնիւ քաջի արիւնը  
Զը ցամաքի մինչ յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կուսանք դափնեայ պսակ թող հիւսեն.  
Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պըսակեն.  
Անվախ կուրծքդ գոհարներով դարդարեն,  
Կեցցես յաւէտ դու անսասան, Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար  
Թող դայլայլեն գիշեր ցերեկ անդադար.  
Անյաղթ մընաս դափնիներովդ անհամար,  
Ո՛վ քաջ հերոս ազգի պաշտպան, Անդրանիկ:

## ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ հայրենիք զիս կը կանչէ,  
Հեռու եմ Հայաստանէն.  
Հայու որդւոյն կը վայելէ՞  
Հեռանալ Հայաստանէն:

Միթէ արծաթ, ոսկի, գոհար  
Կ'ըսփոփէ՞ Հայաստանը,  
Այն որ կ'ողբայ որդւոց համար՝  
Խըղճալի Հայաստանը:

Խոր տըխրութեան մէջ է թաղուեր  
Թագունի Հայաստանը,  
Բոբիկ ոտքով, արձակ մաղով  
Կ'արտասուէ Հայաստանը:

Անգութ երկինք ալ չը յիշեր,  
Մոռցեր է Հայաստանը,  
Անսիրտ Հայքըն ալ չեն յիշեր  
Անուշիկ Հայաստանը:

Ո՛հ թողէք զիս խօսիմ ազատ,  
Երգեմ միշտ Հայաստանը:  
Անուշ երկիր, կոյս անարատ,  
Աննման Հայաստանը:

Արե ծածկէր է իւր դէմքը,  
 Խաւար է Հայաստանը,  
 Հայոց արեւն ալ մարեր է.  
 Սև հագեր Հայաստանը:

Թշուառ սըրտիս ձայն կը կըտրի,  
 Ողբալով Հայաստանը,  
 Ո՛հ, չիկայ հալ ոը ըսփոփէ  
 Նաւաղեալ Հայաստանը:

Ա՛րնչև կտրի իմ վերջին շունչ,  
 Պիտի կանչեմ Հայաստանը,  
 Պըլլուիմ մէյ մը իմ հայրենեաց  
 Հապա մտնեմ գերեզմանը:

Անդորրութիւն ես կը խնդրեմ  
 Սիրելի Հայաստանին,  
 Կըտրել այս ձայնս չէ՛ չէ՛ կարող  
 Սոսկումը գերեզմանին:

### ԱՐՁԱԳԱՆԲ ՀԱՅՍՏԱՆԻ

Ի՞ գէն Հայեր, ի սօւր, և հրացան:  
 Տաճկա-Հայաստանից կոչում է մի ձայն,  
 Լեռից լեռ թնդում է անեղ հրաման,  
 Թռէք Հայեր, թռէք գէպի Հայաստան:

Արեւելք արեւմուտք, հարաւ և հիւսիս  
 Դղրդաց ու Թնդաց քաղցր աւետիս.  
 Հայկայ քաջ զաւակաց առոյգ կուրծքերից  
 Ազատութիւն հնչեց ամեն կողմերից:

Տաճկա-Հայաստանը ոտքի է կանգնում,  
 Ասիւծաբար վրէժ, վրէժ է գոչում.  
 Արիւնով ներկուած են բոլոր դաշտերը.  
 Արիւնով ներկուած են բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում,  
 Անթիւ աւար ու գանձ Հայերին թողնում,  
 Յաղթութիւն, յաղթութիւն գոչում միաձայն,  
 Թշնամին յաղթուած է, կեցցէ՛ Հայաստան:

### Ի Մ Խ Ր Ա Տ Ը

Երբ քու հարեանդ գայլ է, դուն էլ գամբու եղիր  
 մեղք չէ.  
 Երբ մէկը քեզ հայհոյում է, դու երեսին թքիր,  
 մեղք չէ.  
 Աւետարանի խօսքերը հաւատացող մարդն ասա.  
 Դիմացդ սուր գործ դնողին ինքդ էլ սուրդ  
 դործ գիր, մեղք չէ:

Վայրենի խուժանի համար Մովսէսի օրէնքը  
սուրբ է  
Քու մեծ առամդ հանողին դու երկուսը հանիր,  
մեղք չէ.  
Խաղաղ, հանգիստ հարեանիդ, յարգէ սիրէ, որ-  
պէս ընկեր,  
Թէ օգնութեան կարիք զգայ, գնա կեանքդ զո-  
հիր մեղք չէ:

Երբ թշնամիդ վիրաւորուած մօտդ ընկած աղա-  
չում է  
Նրա վէրքին սպեղանի, դեղ ու դարման գտիր  
մեղք չէ.  
Կիսակենդան, վատ ապրելուց հազար անգամ  
մահը լաւ է  
Մտիր կոուի ասպարէզը, քաջի նման մեռիր,  
մեղք չէ:

1096

## Ս Է Մ Ա Յ Ի

Գլուխը, թասակը կարմիր տգեղ գազան դևի  
ձեռքից.  
Կարող չեմ ազատել մայրս եօթը գլխեան դևի  
ձեռքից.  
Բազում անմեղ նահատակներ մեռան կորան  
դևի ձեռքից.

Հաղարաւոր դարաքաշներ արին կուլուն դևի  
ձեռքից,  
Վիրաւորուած ամհի առիւծի նման դևի ձեռքից:

Եօթը քլուրներու վրայ շինել է տուն, պատսպարան,  
Նեռի ազդեցութեան տակն է նրան ով դարձրել  
է իշխան.

Բարութեան Աստուածը Վուզէ անել անեղ մի  
դատաստան,  
Չարը հաւատակից է նրան, անիրաւին նա է պաշտ-  
պան.

Գլուխը, թասակը կարմիր տգեղ գազան դևի  
ձեռքից,  
Կարող չեմ ազատել մայրս եօթը գլխեան դևի  
ձեռքից:

Նա չորս մատը տանուլ տուեց պատերազմի անեղ  
դաշտում,  
Հօր Գաբրիէլի հուժկու բռունցքը պատճառեց  
անկում,

Նորից կանգնեց չարերի օգնութիւնով, ստացաւ  
ցնծում,

Աւելի կատաղի դարձաւ անիրաւը արիւնախում.  
Գլուխը, թասակը կարմիր տգեղ գազան դևի  
ձեռքից

Կարող չեմ ազատել մօրս եօթը գլխեան դևի  
ձեռքից:

Զիւանի, խեղճ տկար եղբայրներդ կռուի մէջ են  
 քնկել,  
 Բենեդիկտուս Սաղայելի հետը ասպարէզ են  
 մտել.  
 Կուռում են քաջ, թափում են ճիւղ պատերազմում  
 վաղուց ընտել  
 Որովհետեւ իրանց պաշտած առարկան գերի է  
 դարձել.  
 Գլուխը, թասակը կարմիր տգեղ գազան դեի  
 ձեռքից  
 Կարող չեմ ազատել մայրս եօթը գլխեան՝ դեի  
 ձեռքից:

1904

## Գ Ե Տ Ա Կ

Ափերիցդ գուրս մի ելնիր, կը ցամաքես, ով գե-  
 տակ,  
 Աշխատիր, ջանքեր թափիր, գուցէ դառնաս մի  
 ծովակ.  
 Ուրիշի արտը ջրում ես քո արտերը չոր թողած  
 Հայրենի դաշտ ու ձորերդ մնում են ծարաւ, պա-  
 ւակ:

Կաթ ու մեղրի համ ունիս եղեմական պստի ջուր,  
 Ո՞ւր ես գնում այդպէս արագ, խնդրեմ ասա, դէպի  
 ուր

Իստակ, վճիտ աղբիւրներից գոյացել ես դու  
 մաքուր  
 Հոռած, պղտոր գետերու մէջ մի խառնուիր պարզ  
 վտակ:

Զմեռը քեզ համ չի տալիս, սառչում ես, գետ պա-  
 տուական  
 Գլուխդ տաք պահպանում ես, ոտքերդ ցրտից  
 կուլան.  
 Հարաւային տաքուկ հովը յոյս կուտայ կենդա-  
 նութեան  
 Շարժում ես գոչգոչալով միշտ դու գարնան ժա-  
 մանակ:

Վազիր, հասիր դէպի հարաւ տնանկ, աղքատ շատ  
 ունես  
 Ծորան ջրի կարիք շատ կայ, գնա այնտեղ,  
 իմ հոգիս,  
 Ծարաւի, վառուած սրտերուն տար զովութեան  
 աւետիս  
 Թող հոսի քաղցը բիւրակնեան վճիտ ջուրը ա-  
 նապակ:

Քո միջիցդ երկու փոքր առուններ են դուրս ե-  
 լած  
 Պահել են համ ու հոտերը, դեռ հովի մէջ չեն մտած  
 Չեն մոռացել, քաջ գիտեն որ քեզանից են  
 գոյացած  
 Զրարաշխը քո մասերդ քեզ կուտայ կանէ գոհունակ:

# Ս Է Ր

Սիրոյ վրայ հիմնուածը չի կործանի  
Երկնային, անմատչելի զօրութեան կը նմանի.  
Որտեղ որ սէրն է իշխում, մարդիկ ուրախ են  
առ միշտ.

Սէրը թշնամի չունի, չունի յոյսեր, չունի վիշտ:

Ե՞րբ պիտի ողջ մարդկութեան սէրը լինի թա-  
գաւոր

Ծագէ աշխարհի վերայ սիրոյ արփին զօրաւոր.  
Սէրը զէնքից զօրեղ է, ամուր բերդ է անաւիկ,  
Սիրոյ հպատակները ապրում են միշտ երջանիկ:

Ինչ ազգի մէջ սէր չկայ, չի դիմանալ փորձու-  
թեան

Կանհետանայ, կը կորչի, կը հալչի ձիւնի նման  
Սիրով միաբան ազգը չունի անկում, չունի վերջ  
Անփուտ պողատու ծառը բնաւ չի մնալ ստերջ:

# Գ Ա Զ Է Լ

Մայր, քու բալուլիդ գաւակն եմ, իսկ որորանս  
դու ես.

Պայծառ արես, լուսս, իմ աղօթարանս դու ես.  
Գիշերը դրանդ շէմքին դամ երեսս տրորեմ  
Հովանի հրեշտակս, անգին պահապանս դու ես:

Հաւատով դիմողներուն կեանք է տալիս քո սուրբ  
հացդ

Լիուլի առատութեան խնկելի սեղանս դու ես.  
Քո կրակդ արդարութեան արեւից է, թաղուհի,  
Սէր ու ջերմութիւն բերող անշէջ վառարանս  
դու ես:

Գեղեցիկներու մէջը բեզ սիրեցի, բեզ պաշտեցի  
Սրբունի սուրբ, իմ հոգեկան վեհ ու կայանս  
դու ես.

Գոյութիւնս բեզանով եմ պաշտպանում աշխարհի  
մէջ  
Ինձ՝ Զիւանուս մաքրիչը, ծնող աւաղանս դու ես:

# Գ Է Ո Ր Գ Զ Ա Ո Ի Շ Ը

Տասն և եօթը տարի վսեմ սուրբ գործին  
Ծառայեց հարազատ Գէորգ Զաւուշը.  
Նեղութեան դիմացող, երկաթէ մարմին,  
Անգլիայի պողպատ Գէորգ Զաւուշը:

Քառասուն և եօթը կռիւներ տեսաւ  
Պարտութիւն չըկրեց, յաղթող դուրս եկաւ,  
Որպէս սալամանդը բոցի մէջ մտաւ  
Մարեց, պրծաւ աղօտ Գէորգ Զաւուշը:

Հագար իննը հարիւր ճիշտ եօթը թուին,  
Ուղիղ մայիս ամսի քսան և ութին,  
Մշու Սուլուիս գիւղում կռիւը վերջին  
Արաւ կտրիճ Սահրատ Գէորդ Չաւուշը:

Յանկաքժ վրայ տուեց թշնամին վատթար  
Պաշարեց հերոսին զօրքով անհամար.  
Եօթը ժամ դէմ դրեց, կռուեց քաջաբար:  
Անբիժ ու անարատ Գէորդ Չաւուշը

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒԳԸ

Իմ սիրելի զաւակունքըս  
Կը թափառեն օտար աշխարհ.  
Էս մեր դիմեմ, մեր փնտրուեմ,  
Կը ծառայեն այլոց խոնարհ.  
Եկայք, որդեակըք իմ,  
Ձեր մօրն այցելութեան:

Դարեր անցան, լուր մը հասի  
Իմ քաջերըս մեռան, կորան,  
Կուլամ, արիւնըս կը սառի...  
Մէկը չունիմ տայ ինձ դարման:  
Եկայք, են,

Արիւնս ցամաքած, սիրտըս մաշուած,  
Դէմքս է տըխուր մինչ յաւիտեան  
Եւ կարօտով իմ որդեկաց,  
Պիտի իջնեմ սև գերեզման,  
Եկայք, են.

Եւ դու, հովիւ թափառական,  
Կ'երգես տըխուր ի մէջ հովտաց,  
Ե'կ, արտասուենք թանկ կորըստեան,  
Տըխուր մահուան մեր որդեկաց.  
Եկայք, են:

Իսկ դու կըռուենկ իմ հայրենեաց,  
Գրնա հեռու աչքէս ի բաց...  
Յետին ողջոյնս տար զաւակաց,  
Ձի կեանքիս մէջ յոյսս է մեռած:  
Եկայք, են.

### ԻՆՁ ՄԻ ԽՆԴՐԻ

Ինձ մի խնդրիր, ես չեմ երգի—  
Տխրութիւնս է ահագին.  
Աղէկըտուր նորա ձայնից  
Կը խորտակուի քո հօգին:  
Ո՛չ, քեզ համար այդպիսի երգ  
Երգելու չեմ ես երբէք:

Ես երգեցի սարի վրայ,  
Ուր չորացան խոտ ու վարդ.  
Անապատ է այնտեղ հիմա,  
Սև, ամայի անապատ,  
Հառաչանքից՝ այրուած սըրտում  
Էլ ծաղիկ չի դալարում:

Բուր և զեփիւռ ես կ'ուզէի,  
Եւ արշալոյս ոսկեվառ:  
Որ մի պայծառ երգ հիւսէի  
Ու երգէի քեզ համար:  
Բայց իմ սիրտը բըռնած են՝ դեռ  
Հուր, հառաչանք, սև գիշեր:

## ԽԱՆԻ ԵՐԳԸ

Հուսին չկար, մութ գիշեր էր,  
Մի խումբ կ'երթար արագ, արագ,  
Տեսանք որ քաջ խանի խումբն էր.  
Զինուած էին մօսիներով:

Կեանքերը ազգին նուիրած,  
Կտրիճ խանն առաջ ինկած՝  
Գնում էին թշնամու դէմ,  
Թռչում էին ինչպէս կրակ:

Հըրացանները ուսերին,  
Դրօշակը պարզել էին,  
Գընում էին ուրախ զըւարթ.  
Ազատութիւն երգում էին:

Մութ անառից անցնում էին  
Ամէն մէկը առի՛ծ էին,  
Նժոյգ ձիանց վըրայ նստած՝  
Մերկ սըրերը քաշել էին:

Իբր քաջ խանը ելաւ Բասեն,  
Թնդանօթներ արձակեցին.  
Հայ քաջերը մօսիներէից  
Գնդակները գորգոռացին:

Երբ քաջ խանը հասանդ փութար,  
Լերիք առիւծներս իմ քաջ,  
Մտան թշնամու խիտ շարքերը,  
Կոտորեցին ձախըն ու աջ:

Կեցցէ խանը իւր խմբովը,  
Սարսափ թողեց Բասենոյ մէջ,  
Երեք օր ու գիշեր կռուեց,  
Աչերից կտրեց քունը:

Հայաստանի հողի վրայ,  
Քաջը թափեց իւր արիւնը՝  
Միճազ, յիշէ, չը մոռանաս  
Կտրիճ խանի քաջ անունը:

# Ֆ Ի Տ Ա Յ Ի

Թիփի, բորան մութ գիշերին  
Պըտուտում էր ֆիտային,  
Փամփուշտները խաչկապ կցած  
Հրադաններ ուսերին:

Ա՛խ, ֆիտայներ, ջան ֆիտայներ,  
Ձեր մայրերը ձեզի դուրպան,  
Մշու Սուլթան՝ Սուրբ Կարապետ  
Ձեզի լինի օգնական:

Ա՛խ ֆիտայներ, ջան ֆիտայներ,  
Ձեզ հետ տարէք իմ աղէն,  
Ձեզ հետ ապրի, ձեզ հետ մեռնի,  
Ազգին մատաղ իմ աղէն:

Թիկունքըդ լայն, թևերըդ պինդ,  
Ձեռքերըդ պինդ պողպատից,  
Սիրիդ գիտես, կռուիլ չ'իտես,  
Դու հսկայ երիտասարդ:

Քոյրըդ տանում են քիւրտերը,  
Հօրդ արիւնն են ծծում,  
Քու հղբայրն էլ կռուի դաշտում,  
Կոտորում է թշնամուն:

Դաշտը թողի՛ր արօր ու մաճ  
Իմ մէկ ու ճար, ազիզ լաճ,

Մի քիչ խաղայ հրացանի հետ,  
Որ էլ չտանք քուրտի խարճ:

Վէրքերով լի ջան ֆիտայ եմ,  
Կը թափառե՛մ, տունն չունիմ,  
Եարիս փոխան զէնքս եմ գրկել,  
Գիշերները քունն չունիմ:

## Վ Ր Է Փ

Թող կորնչին տաճիկները  
Հայաստանի սուրբ հողէն  
Իսլամական անարգ լուծը  
Ձնջուի Հայաստանէն:

Բաւական է որքան նորա  
Հայու արիւն ծծեցին,  
Հայու ջանքով, աշխատանքով  
Պետութիւն պաշտպանեցին:

Հայու հացը, հայու փողը  
Մինչև երբ տաճիկն ուտէ,  
Իւր գարշելի պիղծ բերանով  
Հայութիւնը անարգէ:

Վրիժուց կայծակ թող բորբոքի  
 Հայ առիւծների սրտում,  
 Թաղել Իսլամի գլուխը  
 Դիւցադունների երկրում:

Սուրով սուրի դէմ մարտնչիւ,  
 Արեան դէմ արիւն հանիւ,  
 Իւր մէկ հաւը գողացողին,  
 Ամբողջ տունը թալանել:

## Մ Ո Ւ Շ

Թող չերգէ բլբուլ, Մշու դաշտերում  
 Թող վարդեր բացուին Սասնոյ լեռներում,  
 Թող մեր թշնամիք սարսեն սարսափեն—  
 Գազան ոսոխներ ճաքեն, տրաքուեն:

Մշու դաշտեր ծաղկունքով բացուած,  
 Հայու սիրունդը կը պահէ Աստուած,  
 Ինչքան որ կ'ուզեն թշնամիք թող գան,  
 Սասնոյ լեռներէն լճնչ պիտ ստանան:

Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,  
 Այդ թշնամուցը ո՞վ կը վախենայ  
 Թող հայ աղջիկը երգէ վարվուռն,  
 Սուր զէնքը ձեռին՝ ջարդ տայ քիւրտերուն...

## Մ Ո Ւ Շ

Թող բլբուլ չերգէ Մշոյ դաշտերում,  
 Թող երգ չհնչէ Սասնոյ լեռներում,  
 Թող ժպիտ չը գայ Հայերուս գէմքին,  
 Թող թախիժ տիրէ հայերուս սրտին:

Հայի ձեռքերը արիւնով ներկուած,  
 Հայոց սրտերը վշտով է պատած,  
 Էլ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ շուշան,  
 Հայոց Եղեմի դաշտում աննման:

Բանի հայ աղջիկ չէ զարդաբեղու,  
 Ծաղկով իր կուրծք շքեղ պննելու,  
 Թող երգ չհնչէ Մշոյ դաշտերում,  
 Թող բլբուլ չերգէ Սասնոյ լեռներում:

## ՄՈՒՐԱՏԻ ԵՐԳԸ

Հայաստանէն եկած զինուոր,  
 Պատմէ ինձի հայրենիքից  
 Անդրանիկի զինուորները,  
 Վրէժ են լուծում քիւրտերից:

Ուրախ եղիր դու հայ տղայ,  
Ունիս սաշտպան քաջ Անդրանիկ,  
Մուրատի պէս հոտոտ ծղիկ,  
Էլ թնչ է ուզում հայրենիք:

Վիթխարի պէս կտրիճ Սեպուհ  
Պողպատի պէս բազուկները.  
Կայծակի պէս քաջ կտրիճներ.  
Էլ թնչ են ուզում հայերը.

Գէորգ Չաուշ և Հրայրը.  
Սարսափ ձգին Քիւրտիստանը  
Կոտորեցաւ ողջ բանակը,  
Ազատուած չէ Հայաստանը:

## ՀՆՁԱԿԵԱՆ ՄԱՐՇ

Հայոց աշխարհում ծագեց նոր հրդեհ,  
Օգնութեան հասէք Հայկայ զաւակներ,  
Վտանգը մեծ է, չկայ մի օգնող  
Այրըւող տանջւողին մի ձեռք կարկառող:

Նա դաւաճան է իր հայրենիքին,  
Որ օգնել չուզեր ճիշդ ժամանակին.  
Հարաւ և հիւսիս շատ թափառեցինք,  
Պապական տանն էլ հետքը կորուսինք:

Չար թշնամիքը միշտ ահաբեկի՜,  
Թոյն են սերմանել մեր մէջ վարակիչ  
Բաւ է բաւ Հայեր օտարք մեզ խաբեն,  
Եւ մեր արիւնով իրանք աշխատեն:

Ասպարէզը բաց է մեզի ահա,  
Ջարդում փշրում են մեզի անխնայ,  
Բաւ է մեզ ընկերք լաց ու կոծ անել:  
Անարատ Հային երբէք չի վայել:

Կտրիճ Հնչակեան, դուրս եկ համարձակ  
Պարզէ քու մաքուր ամբիժ դրօշակ.  
Վստահ քալիւրով սլացիր առաջ  
Եղիր քաջ զինուոր և պարտաճանաչ:

## ՖԷՏԱՅԻ

Հայրենեաց սիրու համար խմբեր պատրաստել  
եւ քաջ  
Հրացանները ուսերնին փամփուշտները ձախ ույշ  
Հնազանդ կարգով շարուած իրանք աւիւծի պէս  
քաջ  
Գնում էին դէպի յառաջ, օգնելու Անդրանիկին:

Համիտիէ ալային հրովարտակ բաժնեցին  
Թնդանօթներով, զէքերով զէպի Սասուն գնացին:

Եաման եկաւ քաջ ֆէտան, սարսափ տիրեց բա-  
նակին  
Փախչում էին դէպի լեռներ վախկոտ քրդեր ա-  
հագին:

Դիրքերից դուրս ցատկեցին, մօտենում են մեծ  
յոյսեր  
Դաշնակցութեան ցանած սերմեր տալիս են նորա-  
նոր բոյսեր:

## ՔԱՋ ԵՂԵՔ

Հասաւ արդ ժամ փառաց, ճն եկէք Հայեր  
Ալ ինչ հարկ վարանման, կաղմենք բանակներ  
Խըրախոյս առէք և արիարար  
Ձէնք առէք, քաջ եղիք, մի՛ անէք դադար:

Օն, դիմենք մենք ի դաշտ, դիմենք Շաւարշան  
Համախմբեալ կաղմենք բանակ Հնչակիան,  
Վատ է այն անսիրտ հայն որ թշնամիի  
Երեսէն կը դողայ, չունի սիրտ արի:

Իօկ արի գինւորին լուսափայլ ճակատ  
Մշտադալար դաինին բոլորէ պըսակ:  
Ոտքերու տակ սըփոններ վարդեր ու շուշան  
Յիշատակըն Հայոց երգենք յաւիտեան:

Ծածանի մեր դրօշ ի հարին ոստան,  
Մտյր քաղաք թող ըլլայ Հայոց ազգութեան  
Զրահներ հագուցէք սիրոյ հաւատքին  
Փառք ունինք մենք թէ հոս թէ մէջ երկնքին:

## ՔԱՅԼԵՐԳ ԽԱՆԱՍՈՐԻ

Կըռուեցէք, տըղերք, կռուեցէք քաջ քաջ  
Անվեհեր կանգնած թշնամու առաջ,  
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,  
Հեռու մեզանից ոսոխին ահը:  
Յառաջ խիզախենք իբրև նահատակ  
Ի դուր թող չանցնի մեզնից մէկ գնդակ:

Ահա քիւրտերը փախչին սարսափած,  
Ահա, դիակներ արեամբ շաղախուած.  
Կրակ տեղացէք անդադար կրակ,  
Փառք Դաշնակցութեան առատ է գնդակ:  
Այս անգամին ալ ցոյց տանք թշնամոյն  
Թէ՛ ինչ է Հայուն ոյժն ու քաջութիւն:

Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջեր,  
Մեզի կ'սպասեն մեր հէք եղբայրներ.  
Զի՛ ծնանք ազատ գէթ մեռնինք ազատ,  
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ.  
Դէ՛հ կռուինք տըղերք մինչև շունչ վերջին  
Արժանի լինինք փառաց պսակին:

Մեռնինք յուսալով մերն է ապագան,  
Մեռնինք, բայց կեցցէ, կեցցէ Հաւաստան,  
Այսպէս յորդորեց և ինկաւ արին  
Թողլով մեզ անուն յիշատակ բարին.

Ահեղ կոռւի մէջ մի փոքրիկ հերոս  
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս:

## ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբարք մարդկութեան մէջը,  
Հայ կընքեր է մեզ պատմութեան էջը.  
Հայ անուամբ ըզմեզ կ'ողջունէ երկինք—  
Եղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք,—մեր հայրն է այն դիւցազուն,  
Որ զԱզատութիւն սորվեցուց մարդուն,  
Ու մեզ վէհ անուն մը տըւաւ բաժին.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Մեր աշխարհն է սոսքը.—Մեր հողուն վըրան,  
Աստուած է քալեր՝ օրհնելով զԱզամ.  
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ ինք —  
Եղբարք, Հայ ապրինք:

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին որբան  
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.  
Կըրօնից նախկին սեղան է Մասիսը.  
Եղբարք, Հայ ապրինք:

Հայուն պիտէ անուն՝ ոչ միայն յերկիր՝  
Այլ և յեթերց մէջ շողայ լուսալիւր.  
Քաջ Հայկին աստեղը անմահ են երկինք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Հայ ապրինք — Ո՞ր Ազգ կայ հայուն նման,  
Որ ունենա՞ հին պարծանքներ անսքան,  
Ո՞ր ազգ Հայուն պէս չքեղ Հայրենիք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Ըսէք, որ Եզդին չորս առաքեալներ  
Երկնից թագաւորն է դիսպան դրկիր,  
Ո՞ր թագատրին հիտ թղթակցեր ենք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Ո՞վ կըրնայ հաժրիլ սրբոց մեր անուանք,  
Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ.  
Մեր եկեղեցին յերկրի է երկինք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Քրիստոս ոսինք անդրանիկ օրհնենք,  
Հաւատոյ հոսք միշտ ախոյեան մենք,  
Հայը զարմացուց զերկիր և զերկինք.—  
Եղբարք, Հայ ապրինք:

Մեր Ազգ հատուղ է ճիշդ Յիսուսի,  
Որ խաչն այսչափ դար առած է յուռի.  
Ո՛չ, չը խոնարհիր, չըլլար դասալիք—  
Եղբարք, հայ ապրի՛նք:

Այո, խաչին կեանք, կեանք է վշտալիյ,  
Այո, Հայուն կեանք՝ կեանք է ցաւալից,  
Բայց խաչն՝ յաղթութիւն ունի վեհ կնիք.—  
Եղբարք, հայ ապրի՛նք:

Ո՛չ ճակատագիր՝ մեր չէ միշտ տխուր՝  
Ըզթշուառութեան ուտել հացն ու ջուր.  
Նոր երջանկութեան ապագայ մ'ունինք.—  
Եղբարք, հայ ապրի՛նք:

Հայ ապրի՛նք, որ մեր որդիք ալ, եղբարք,  
Կարենան պարծիլ որ մեզ ունին հարլ.  
Զըլանք Հայ անուան, չըլլանք նախատիրք.—  
Եղբարք, Հայ ապրի՛նք:

## Ո Ւ Ր Ա Ք Ե Ր Գ

Նորից փայլեց արեգակը հայերուն,  
Օգնեց բարի ժամանակը հայերուն.  
Գթոտ Հայրը հանուր ռուս պետութեան  
Պարզեց արդար խնդրագիրը հայկական:  
Խաւարն անցաւ, լոյսը ծագեց հայութեան  
Կրկին վառուեց աշտանակը հայերուն:

Մեր ծերունի հայրապետը հրճուեցաւ  
Ինչ որ կուզէր քարերարից՝ ստացաւ.  
Մուգ էր մտել, տրտմութիւնից դուրս եկաւ.  
Որպէս փիւնիկ նորոգուեցաւ, կեանք առաւ.  
Նոր հով փչեց սև մութն եկաւ անցկացաւ  
Լոյս ներշնչեց աղեղնակը հայերուն:

Յնձա. խնդա, ծերունադարգ մեծ Մասիս  
Հրճուէր հարաւ քեզ ոյժ տուեց վեհ Հիւսիս  
Նոր տարի է մեզ նոր օր է, նոր ամիս,  
Ողջ արամեան ազգատոհմին աւետիս  
Բարեխնամ Թագաւորը ամենխա,  
Կտրեց լացն ու աղաղակը հայերուն:

Տէրը երկար կեանք տալ մեր Փոխարքային  
Պայծառափայլ կոմս Վորոնցով-Դաշկովին  
Նա միջնորդեց, աշխատեցաւ սրտապին  
Կայսեր մօտը յարդիւ տուեց մեր ազգին  
Խլուած գոյքը լեռ դարձրից գլխովին  
Նորից լինեց աւերակը հայերուն:

Զիւան, անցաւ ցուրտը ձմեռը ձիւնաբեր,  
Արեւ ծագեց գարուն քերեց անվեհեր.  
Մանկունք հայոց սուտանեցէք ղէպի վեր  
Բարձր տեղից ստացանք ոյժ քաջալեր  
Ազրի անցաւ Նիկողայոս Կայսրը մեր  
Տէր ու պաշտպան օմանդակը հայերուն:

## Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ը

Սենք հագած հասեր կուլայ  
Տըտում, տխուր Հայաստանը  
Ասացէք ինչո՞ւ պէտ կուգայ  
Հայից թափուր Հայաստանը:

Բնիկ մայր երկիրը հայոց  
Ափսոս եղել է դիւանոց.  
Դարձել է սիրունի այլոց  
Սիրուն, ժաքուր Հայաստանը:

Նրան մոռացել է Աստուած  
Վերեւից քիչ չի նայում ցած  
Սրտի վրայ ունի ցցուած  
Երկսայրի սուր Հայաստանը:

Նման է ջախջախուած հաւի  
Ենթադրուել է սաստիկ ցաւի  
Փոխուել է կուճուրած հաւի  
Ոսկիփետուր Հայաստանը:

Կարմիր բորենին բռնակալ  
Զի ցանկանում ճանապարհ տալ  
Որդիքը չեն կարող գնալ  
Կանչում է զուր Հայաստանը:

Երկիրասանի եւրոպան  
Վարուեց Պիղատոսի նման.

Զը լսեց, սպասեց այսքան  
Մէկ բարի լուր Հայաստանը:

Զիւանի, ժայթքում է կրակ,  
Երկրից դրախտի տեսակ  
Դարձել է խարխուլ աւերակ  
Ժայռից ամուր Հայաստանը:

## Վ Ե Ր Զ Զ Ե Ղ Ա Ի

Վերջ չեղաւ տխրութեանդ, մայր իմ հարազատ,  
վերջ չեղաւ.  
Գլխիցդ ցուրտն ու բուքը որպէս Արարատ վերջ  
չեղաւ.  
Տխրութիւնդ շատ տեւեց, Յոբին համեմատ, վերջ  
չեղաւ,  
Տարաբախդ զաւակներդ թողեց յուսահատ վերջ  
չեղաւ:

Քու ունեցող բարեկամ բժիշկներդ ձեռք չը տուին  
Տասնապատիկ ցաւիդ աւելացաւ խղճալի կին,  
Այրի ես սենք հագած, չունիս ցաւակից ամուսին  
Քեզ պահում է կենդանի Աստուծոյ պարգեւած  
հոգին,

Վերջ չեղաւ դրութեանդ, մայր իմ հարազատ,  
վերջ չեղաւ:

Քեզ չը սիրեց, այլ ի կին, անդուծ, անիրաւ աշ-  
խարհը.  
Երբ ծնար, քեզ հագցրեց կրակէ հալաւ աշխարհը.  
Մեղսաւոր, հին հոմանի, երկդիմի պառաւ աշ-  
խարհը  
Ուրիշին լաւ օր տուեց, քեզ միայն ցաւ աշխարհը  
Վերջ չեղաւ նեղութեանդ, մայր իմ հարազատ,  
վերջ չեղաւ:

### ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ՄԻ ԹԻԻՐ- ՔԱՀԱՅԻ ԵՐԳԸ

Եւս ռըր դիմեմ, ռւմից օգնութիւն խնդրեմ,  
Որ ինձ ցոյց տայ ճանապարհը Հայրենեաց.  
Երկար կարօտութեան, անխ, դիմանալ չեմ  
Ինձ կը մաշի գաղափարը Հայրենեաց:

Մեզ դահիճ են դարձել անխիղճ թուրք ու քուրտ  
Ձեռք ձեռքի են տուել, արեւ են խորհուրդ,  
Թող գայ փրկէ մէկ տառապեալ ժողովուրդ  
Ով գիտէ փրկութեան ճարը Հայրենեաց:

Բուլանը լս գաւառի Եօնհալու գիւղից,  
Սիմօնի որդին եմ, Մրտօյի ցեղից.  
Ձրկուել եմ եմ օթեանից և տեղից  
Գգուել կուգեմ հողն ու քարը Հայրենեաց:

Կայր ու կարողութիւն, արտ, արօր, զուլթան  
Թողել եմ առանց տէր և անտիրական  
Ձեռք եմ առել ցուպը սև պանդխտութեան  
Դարձել եմ հէք ցաւագարը հայրենեաց:

### Կ ԱՐՅ Է Լ

Բախտը պակաս, ասողը անլոյս հայի նման ցեղ  
կայ էլ.  
Նրա կալմուածքի վրայ վէրք չունեցած տեղ  
կայ էլ.  
Խանձր, սծ է մեր բնիկ աշխարհը անդուծ հրդեհից  
Ձը աւերուած հայի քաղաք, մի շէն հայի գեղ  
կայ էլ:

Ով մի ածելի վեր առաւ, սափրիչ եղաւ մեզ  
համար  
Մեր ցաւերուն բժիշկ դարձան ամեն անգէտ և  
յիմար.  
Ով ինչ ասաւ հաւատացինք, գացէ լինի մեզ մի  
ճար,  
Դեղատանը մեր չը տեսած, ձեռք չը դարկած  
դեղ կայ էլ:

Կարծում եմ հայի երջանկութեան ժամը արդէն  
հասել է.  
Խեղճի ձին արագ վաղիւով չունչը քիչ պակասել է.

Չը գիտեմ գո՞ւն է սպառուել թէ իւրը սպառուել է,  
Հայի ճրագը մռայլ է մէջը արդեօք եղ կ'ա՞յ էլ:

Քու ծառի ծառաւ կը թողնես, ա՛յոյ ջուր կու-  
տաս, Զիւան,

Օտարին չի կարող սիրել ով չի սիրել ինքն ի-  
րան.

Հայն էլ մարդ է, կօսմօղօլիտ, հասիր նրան օգ-  
նութեան,

Սրանից անտանելի վատ օր և սրանից նեղ կ'ա՞յ էլ:

## ՀԱՅԻ ԿԵԱՆՔԻՑ

Տասնու վեցը երբ վաթսուն եւ մ'էկ եղաւ,  
Այն օրուանից թեքուեց ձախ մեր անիւը.  
Պայծառ Արուսեակը ամպի տակ մտաւ,  
Մեղանից ձեռք քաշեց հզօր Լերձիւը:

Կատաղի վագրի հետ ասպարէզ կ'լանք,  
Սաստիկ ֆեստուեցիներ ամպի տակ մտանք,  
Շատ մեծ զոհեր տուինք, ոչինչ չստացանք,  
Իզուր անցաւ մեր գոյութեան կոիւը:

Վաթսուն և մէկ յօդուածը մեզ տրուելուցը ղէս.  
Կոտորուելով համարեա թէ եղել ենք կէս,  
Դեռ քաշելիք ունենք, Իսրայելի պէս,  
Կարելի է չէ լրացել մեր թիւը:

Զիւան, մէկ օր կը փրկուենք Աստուծով  
Հայի թափած արտասուքը եղաւ ծով.

Անման հերոսները իրանց արիւնով  
Բարձրացրին հայի յարգն ու պատիւը:

1906

## ՄԻ ԽՈՒՄԻ ՔԱՋԵՐԻ ՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Նորման գաւառի մէջ մի հերոս ծնաւ,  
Անունը Գէորգ էր, որսորդ քաջագուն.  
Պատանի հասակից ասպարէզ մտաւ  
Սիրեց զէնքը որպէս հոգեակ սիրասուն:

Հազար ութը հարիւր վաթսունը ութին  
Ծնունդ առաւ, փայլեց մեր քաջը անզին  
Անհիվեր մարտնչող որպէս հրածին  
Հասակը վայելուչ պատկերը սիրուն:

Հայ ազնի անձնուէր ժառանգ հարազատ,  
Շենացնող մութ վայրերը անապատ,  
Ասպարէզը փշոտ, շրջապատը վատ  
Ազգի ցաւը ծանր բեռ էր իւր հոգուն:

Հեռներու, ձորերու պաշտող սիրահար,  
Որս էր տնում ընկերներով անդադար.  
Անվրէպ նշանը խփելու համար  
Ժողովուրդը տուեց և «Որսորդ» անուն:

Թւնէր հայրենակից մի քաջ բարեկամ  
Տասնապետ Պետրոսը գործով անթառամ  
Իւր քաջ ընկերի հետ մի քանի անգամ  
Ահեղ կռիւներում եղել էր Սասուն:

Ունէին երկուսն էլ հռչակ ու համբաւ  
Եղել էին միշտ անտրտա, անպարտաւ  
Մէկը մէկից կտրիճ, մէկը մէկից լաւ,  
Անխոնջ գործում էին անհանգիստ, անբռն:

Պետրոսը բռնուկից շատ բանտեր մտաւ,  
Ոտքերիցը գլխի վրայ քաշ եղաւ.  
Լուսաւորչի նման չարչարանք տեսաւ  
Չը փոխեց սուրբ համոզմունքը հաստատուն:

Չափից աւել բռնութիւն ու հալածանք  
Ափրակ դիպի մէջը էլ չը մնայ կեանք,  
Քաղցը հայրենիքից հեռացան նրանք  
Գաղթիցին դէպի Օլթի թողած տեղ ու տուն:

Այնտեղ էլ Գէորգը քաջ տղերք ճարեց,  
Որսորդ եղաւ զէնք ու ասպարը լարեց.  
Պատուով մարդու նման մարդուր կեանք վարեց  
Աջալուրջ, միտքը բաց խելօք ու արթուն:

Հազար իննը հարիւր չորսին դէպ երկիր  
Արշաւում էր մի խումբ աշխույժ քաջ ու ժիր,  
Վաթսուն ու մէկ հոգի ողջը հատընտիր  
Խմբապետն էր քաջ Թումանը իմաստուն:

Կարմիր խորշակի հետ ցուրտը սառցային  
Առաջը կտրեցին Թումանի խմբին.  
Քրիստոնեայ զօրքը մոլեռանդ թուրքին  
Չեռք պարզեց՝ թափեցին շատ հայի արիւն:

Յիշեալ տխուր արշաւանքի ժամանակ  
Տեղաց նրանց վրայ արճիճ ու զնդակ.  
Շատերու հետ նրանք եղան նահատակ  
Գէորգն ու Պետրոսը բարի զգայուն:

Չօնուցան շատ քաջեր, ընկան քով է քով  
Փշեց ժանտատեսիլ դաժան մահու հով.  
Կտրիճ Առաքելը Սիմակ անդունով  
Գանձաձորցի առիւծ, տարին երեսուն:

Էօնկիրեցի Ահարոնի գործերը  
Յոյց կուտան կտրտուած ոտք ու ձեռքերը  
Մինչև կեանքի վերջը պահեց զէնքերը.  
Ազատ մեռաւ, չը յանձնուեց թշնամուն:

Գէորգն ու Պետրոսը անմահ կը մնան,  
Անունով ու օրինակով անվախճան.  
Նրանց գործը չի մոռացուիլ յաւիտեան  
Կանց կենայ շատ ձմեռ, կանցնի շատ գարուն:

## Բ Ա Յ Ե Ա Թ Ի

Ով որ իւր ազգն ուրանայ,  
Երկու աչքով կուրանայ,  
Յետնհալ աղքատի նման  
Դռնէ ի դուռ մուրանայ:

Կշտին դիպչի գեղարդը  
Փորիցը թափի լեարդը,  
Դժոխքի բռնցկելիք  
Լինի աղգուրաց մարդը:

Կեղծ ու պատիր հնչողին  
Վազրի պէս մռնչողին  
Աստուած աշխարհից ջնջէ  
Հայ անունը ջնջողին.

Հայը որք ժողովուրդ է  
Կեսնքը տիրող խառնուրդ է,  
Ազգուրաց՝ աստուածուրաց  
Երկուսը մէկ խորհուրդ է:

Հային չի հաւասարուի  
Երբ որ հայը գումարուի.  
Հայերէն չը գիտցողը  
Կիսատ հայ կը համարուի:

Ազգուրացը անմիտ է  
Իր ազգին ծուռ կը դիտէ.  
Բթամիտ շահասէրը  
Ազգութիւնը ինչ գիտէ:

Որոնք Հայաստանը  
Հայրենիքիդ նշանը  
Ինչպէս հայ ծնար մօրից  
Հայ մտիր գերեզմանը:

Ով դու հայ մարդ, զօրացիր,  
Լուսնի նման նորացիր  
Ոչ այլ ազգին անարգէ  
Ոչ քու ազգդ ուրացիր:

Աստուած տուեց նմանը  
Ամենին իր արժանը  
Ազգուրացը Վասակն է  
Աղգասէրը Վարդանը:

Թէև կասուի Վասակը  
Բայց վատ է նպատակը,  
Պիտի խօսուի միշտ բարի  
Վարդանի յիշատակը:

Պատմութիւնը բարի է  
Մէկ ժամ նրան պարգևէ.  
Ահա երկու ճանապարհ  
Որին կուգես հետևէ:

## Յ Ո Յ Ս

Ինչքան երկիւնքը ամպէ, որոտայ,  
Կայծակ՝ հուր-երկաթ, շանթեր արձակէ,  
Թէ սաստիկ կարկուտ, շատ անձրև տեղայ  
Վերջը դարձեալ պայծառ արև կը ծագէ:

Թէ ծովը ծփայ, կատաղի սաստիկ  
Իւր ալիքներով փիւրջ դուրս չի գայ.  
Թող իջնի թաթառ, հանէ փոթորիկ  
Թող փչէ հողմը որքան կամենայ:

Թող պատերազմեն ազգերն իրար հետ  
Թող մէկը միւսի արիւնը խմէ.  
Թող խփեն իրար գնդակ, մահու նետ,  
Եղբայրն իր եղբօր թող միսը ծամէ:

Կանցնին բոլորը, կուգայ ժամանակ  
Ամեն առարկայ իւր վերջը ունի.  
Որդին կը նստի հօրը փոխանակ  
Նոր հոգի, նոր կեանք նորից կսկսուի:

## Հ Մ Յ Ր Ե Ն Ի Ք

Երբ որ լինի գարնանամուտ, նոր գարուն  
Կը բաղմանան վտակներդ, հայրենիքդ,  
Շարիշար, ցնծութեամբ, երգով դուարթուն  
Շարժում են բանակներդ, հայրենիք:

Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դու սիրուն,  
Պէս պէս գունով ծաղիկներդ դալարուն.  
Ձեն դադարիլ աշխատելուց օրն ի բուն  
Քո հարողատ մշակներդ հայրենիք:

Մարդիկ կուգան քո սարերդ մանգալու  
Իբր որսորդ եղնիկներդ որսալու.  
Ե՛րբ կը փոխեն երգը ուրախ կարգալու  
Քո սգազգեաց սոխակներդ հայրենիք:

Դու գրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկայ.  
Քո միջիցդ անհամութեան հոտ կուգայ.  
Հազար ափսոս մարդուց թափուր են հիմա  
Քաջ բաղմամարդ վիճակներդ հայրենիք:

## ՏԱՀԱՀԱՅՍԻ ԳԱՐՈՒՆԸ

Երկարացաւ տաճկահայոց ձմեռը  
Մարտն էլ եկաւ անցաւ, գարունը չեկաւ.

Կանաչեց էլ բրուս ձիւնապատ լեռը  
Սեպուհ սարին բնաւ գարունը չեկաւ:

Կուռնկները խումբ-խումբ թեւ-թեւ տուած  
Եկան տեսան գետեր, լճերը սառած,  
Մաւառնեց օդի մէջ դոյզ թևատարած,  
Արագիլն էլ եկաւ, գարունը չեկաւ:

Խղճուկ երկրագործի կովը, կթանը,  
Փչացաւ լծկանը, հղը, գութանը,  
Մառնամանիք դարձաւ խեղճ Հայաստանը,  
Տաքութիւնը փախաւ, գարունը չեկաւ:

## ՇԼՏ ՈՒՇԵՅԱՒ

Փրկութեան աւետարեւ սուրհանդակը շատ ուշա-  
ցաւ.

Ուրախութեան լուր տուող մեր նամակը շատ  
ուշացաւ,

Իմ մօրս եղբայրները իմ մասին իսկի չեն մտածում  
Կրթըւած թղթիկ բերող աղանեակը շատ ու-  
շացաւ:

Ի՞նչ կը մնայ ունեցած յոյս ու հաւատս կորսուին  
Խաւարը ինձ տանջում է, աշտանակը շատ ուշացաւ,  
Լրիւ երկու տարի է սպասում եմ մէկ ձայնի ես,  
Ողջ ժամերը կազնիդան, ժամանակը շատ ուշացաւ:

Խեղճ հաւի արիւն խմող գող ուրուրը ապրում է  
դեռ,

Երկնային մեծ հարուածը, ուժանակը շատ ու-  
շացաւ.

Ո՛վ Զիւան, հորիզոնը կարկտի ամպեր շատ ունի  
Հաշտութեան կամար կապող աղեղնակը շատ ու-  
շացաւ:

## ՄՕՏՍ Է ՀԱՐԿԱՒՈՐ

(Զեօրգղի)

Էլի միտքս եկան հայոց քաջերը,  
Այսօր քաջ Վարդանը մօտս է հարկաւոր.  
Զեռքերն առած ուրախութեան խաչերը  
Հայոց խրախճանը մօտս է հարկաւոր:

Արտաշէսն էր հայոց մեծ սարի նման,  
Նա անմաշ սիրտ ունէր լեռ քարի նման  
Ներկող թշնամեաց ոչխարի նման,  
Անվախ գայլ Վահանը մօտս է հարկաւոր:

Զիւան կանչի քաջ Վարդանը, Սմբատը,  
Գովէ նրանց անբիծ և սուրբ հաւատը,  
Պարթև Արշակ և Վաղարշակ Տրդատը,  
Երուանձեան Տիգրանը մօտս է հարկաւոր:

# Ո՞ Ի Ր Տ Ե Ղ Է

(Զեօրօղի)

Գնաց վրէժ առաւ Հոչէ արքայից  
Հայոց արքայ քաջ Տրդատը հւր տեղ է.  
Քսաներկու կանգուն գետի վերայից  
Մէկէն թռչող Վարազդատը հւր տեղ է:

Դայլ Վահանը պարսից զօրքին կրակեց,  
Հնարներ մտածեց ու խայտառակեց.  
Տաք շամբուրով Մեհրուժանին պսակեց  
Բազրատունի քաջ Սմբատը հւր տեղ է:

Նա այլոց զօրքերից առնում էր գրաւ,  
Այլոց զրաւում էր, ինքն էր անգրաւ  
Քանի անգամ Հոռմայեցոց դէմ գրաւ,  
Այն Տիգրանեան Միհրդատը հւր տեղ է:

\*\*\*

Օտար ազգեր տիրեցին Թուրքոմանց բուրաստանը,  
Ժողովեցան միասին, մեռուցին այգիպանը.  
Առիժասիրտ Մուշեղը, հւր է հայոց իշխանը,  
Միթէ այնպէս էլ չկայ քաջն Արամեանց տանը.  
Ո՞ւր է մեր քաջնախարար մեծահամբաւ Վարդանը,  
Նրանից սարսափում էր միապետ Պարսկաստանը:

Մարտից սովորելով ժարդը թող գումար մնայ,  
Կեանքը քաղցր պահպանէ իւրանցին յարմար մնայ.  
Ճշմարիտ ազգասէրը յարաժամ ճարտար մնայ,  
Իր որդւոցը հարազատ հոգիով արդար մնայ.  
Ճաշակն արամեանց մերոց մինչև երբ խաւար  
մնայ

Նորացնենք, ով հայեր, մեր հին շտեմարանը:

Պէտք է թոյլ մարդ չը լինէր Արամեան սրբոց  
հոգէն,

Բոլորը կտրիճ ծնան մեր նախնիքը ծնողէն.  
Արիք դուրս չելլենք, եղբարք, մեր հորիզոնի  
տողէն,

Չէ՞ որ մենք էլ ենք նրանց ազգի սերունդի կողէն,  
Արիք, հայոց գաւազներ, խնդրենք մեր Ստեղծողէն,  
Տասցէ ձայն ազատութեան, ողջանայ Հայաստանը:

Մեր բանաստեղծ մարդիկը անթառամ վարդ են  
եղել,

Նրանց ձեռի զէնքերը սուրբն՝ գեղարդ են եղել.  
Քաջաց մօտը թշնամիք՝ զիղ ու յարդ են եղել,  
Երկրի լուսաշաւիղը, երկնային վարդ են եղել.  
Իմանանք մեր նախնիքը ինչպէս քաջ վարդ են  
եղել,

Նրանց յիշատակ թողած նայելով պատմութեանը:

Երգերն առարկներով առենք, լինենք հայկաբուն,  
Ուրախանանք, թե առնենք ձայն տալով միա-  
բերան.

Անհովիւ ոչխարի պէս անուժ են մեզ դատաստան,  
Արիք զօրանանք, հայեր, մենք էլ մեր նախնեաց  
նման.

Վերոյիշեալ արքային կանչելով, աշըղ Զիւան,  
Ձը փափագենք հայութեան քաղաքական անկմանը:

1874

### ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի օրդիք,  
Լեռները հշնենք,  
Արօր, գութան մոռնանք.  
Հրացան առնենք:

Ծընշուած մեր բոլորը  
Յայտնենք զէնքերով,  
Եւ մեր արդար դատը  
Վարենք արիւնով:

Մեր կեանք, մեր մահ,  
Թող լինի ազատ,  
Ծնշուած հայու  
Որդիք հարապատ:

### ՄՈՒՇԵՂԻ ԵՐԳԸ

Խնուսից գալող Հայ զինւորները քաջ  
Այրան դաշտից եկած ու պարտաճանաչ,  
Հին վրէժներ առնել էր նրանց պահանջ  
Դաջի պէս վազեցին թշնամուն առաջ:

Մօտ թուով տասն-ու չորս և իրանք անվախ,  
Ղեկավար՝ Տիգրանն էր, գործում էր անկախ,  
Անմահ Մուշեղ հերոս, Շապուհ և Մելիք,  
Համազասպ, Մարտիրոս կանգնած էին դիրք:

Թաթօն, ընկիր Մօսոյ, Շապուհ և Մելիք,  
Անուանեցան սրանք խմբեր թուրքիկ.  
Խաբփուխ թաղի դիրքերումը միշտ անքուն,  
Այրեցին, ջարդեցին անգութ Մօլի տուն:

Շքեղ Թիֆլիզի քաղաք ամրոցը,  
Ձէր ճանաչում կանխաւ իրա օրդոցը,  
Երբ որ նրանք Մոզնու թաղում կանգնեցան,  
Այն ժամանակ Հայերն ուրախացան:

Թէպէտ քաջ Մուշեղին նրանք զո՛ւ տուին,  
Անգութ թշնամեացը շուտով յաղթեցին,  
Կը լինի ազատութեան գրաւական,  
Պատիւ կը բերեն Հայ Դաշնակցութեան:

## ԽԱԻԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԷՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս գիշեր,  
Իմ չորս կողմս է փոթորիկ,  
Չունիմ քեզ սէր, չունիմ քեզ սէր,  
Ես սիրում եմ հայրենիք:

Այնտեղ անթիւ անբաղդ մայրեր,  
Որդեկորոյս ծնողներ,  
Եղբայրադուրկ անթիւ քոյրեր  
Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի սիրիր, ինձ մի սիրիր,  
Ես շատ ու շատ փոխուել եմ.  
Ա՛ռ թաշկինակդ աչերդ սրբիր  
Ես քեզ սիրել կարող չեմ:

Մընաս բարեաւ, իմ աչքի լոյս,  
Սէրդ լինի ինձ խըրախոյս,  
Արդ արտասուք ես պիտ՝ թափեմ  
Որ իմ ցաւերս ըսփոփեմ:

## ՀԱՄԱԶԱՍՊԻ ԵՐԳԸ

Ծագեց արեւ ազատութեան  
Փախէք ամպեր երկնքից,  
Համազասպը իւր խումբովը  
Կուգայ Խաչէն դաւառից:

Գալիս է բազմաթիւ զօրքով,  
Ատը կիւղէլ Պէկ խանը,  
Յանկարծ ինկաւ Ասքէրանը,  
Հերոսների ուսկանը:

Թուրք խուժանը սարսափահար  
Փախուստ տուեց գլխակոր,  
Թողելով իւրեանց ետեւից  
Դիակներ հազարաւոր:

Հայոց երկիրն ուրախացաւ  
Իւր քաջերով սրտաւի,  
Ամբողջ աշխարհ հաշակուեցաւ  
Համազասպը պանծալի:

## ՔԱԶԱՐԻ ՀԱՅԴՈՒԿՆԵՐ

Կովկասի քաջեր, խմբեր կազմեցէր  
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք,  
Առաւ իր շուրջը, զինւորներ ութսուն,  
Մաքրեց ճանապարհն նա դէպի Սասուն.  
Գուրդը սարսափած, ճարը կտրուած  
Հազար ոսկի է գլխին խոստացած:

Հայ պատանիներ, շուտով շարժուեցէք  
Երբէք մի վախնաք, սուրբ շարժեցէք,  
Հասել է ժամը սուրբ ազատութեան,

Կենալու ժամ չէ շուտով քաղեցէք,  
Սիրենք միութիւն չանենք վատութիւն,  
Ունենանք Հայեր սուրբ աղատութիւն:

Օտար հողի մէջ չմնանք, Հայեր  
Հերքէք է Հային այս պանդխտութիւն.  
Թող չը ծաղրէ մեզ անգութ թշնամին  
Մինչև մենք հասնինք մեր նպատակին.  
Սիրենք միութիւն, չանենք վատութիւն,  
Ունենանք Հայեր սուրբ աղատութիւն:

Քաջ Անդրանիկը անվախ, սուր առած,  
Հայաստան գնալ վաղուց էր ուխտած,  
Ոջու ձախ ջարդել տաճկաց գինուորին,  
Քիւրտերից մատաղ բերել վանքերին  
Դէ՛հ, Շէքիր փաշա, մտածիր հնար,  
Հազար ոսկիով անեն գլխիդ ճար:

Կովկասի քաջեր, առիւծի ճոտեր,  
Սիրէք ձեր սուրբը. առէք նիզակներ,  
Հայ օրիորդներ, պճստալ տիկիւններ,  
Ծախէք ձեր զարդեր, առէք գնդակներ.  
Հարուստք, ձեր ոսկին տուէք մեր աղգին,  
Ձեր անգին անունը յիշեն անբռնաբեր:

Դէ՛հ հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,  
Բաց թողէք սանձեր, անցէք սար ու ձոր,

Ահա կռուի դաշտ, թշնամին անհաշտ,  
Մեր սուր թող ուտէ թշնամու վաշտեր.  
Ասաւ քաջ Մուրատ, առէք իմ խրատ,  
Կամ կռիւ աղատ, կամ մահ անարատ:

## ԽԱՆԱՍՈՐԱՅ ԱՐՇԱԽԱՆՔԸ

Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը,  
Փէտայիներ դաշնակցական, վրէժ են առնում  
հանդումը.

Սոսկաց քիւրտը սարսափ տիրեց Մաղրիկին,  
Երկիւղի մէջ ընկան թէ մարդ և թէ կին:

— Եաման, Աստուած, ֆէտան եկաւ ռը փախչինք,  
Ասաց՝ որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդու-  
հին:

— Մի վախենար, հանգիստ եղիր բաջի ջան,  
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրիժառու քաջ  
ֆէտան:

Մի ժամայ մէջ Մաղրիկ ցեղը ջնջուեցաւ  
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր արեամբ  
ներկուեցաւ

Հայեր, յիշէք նուիրական այս օրը.  
Յուլիս ամսոյ քըսան հինգին կատարեցէք մեր  
տօնը:

## ԽԱՆՄ ԵՒԱ ՉԱՆ

Բերդիցը դուրս ելայ Ալագեազ տեսայ, Խանըմ  
Եւա ջան:

Ապարան աչերիս դուման է դառել,  
Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,  
Լալով ողբալով քէօջ ու բարխանով,  
Ընկեր ճարելով, սարիւր ման գալով:

Մէկգին ոչխարը կարածեն մէկգին գառները,  
Խանըմ Եւա ջան,  
Կանաչել են ծաղիկները, ծառները,  
Դաւն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,  
Լալով ողբալով, քէօջ ու բարխանով,  
Ընկեր ճարելով, ընկեր ճարելով,  
Չէնքեր շարժելով, Աստուած կանչելով:

Արի գնանք քու ման գալած արտերը, Խանըմ  
Եւա ջան  
Քեզի տեսայ թաժացաւ իմ դարտերը, Դու կեցիր  
և այլն  
Ես Ալէքն եմ Չամուրեցի սէ ջիւան, խանըմ  
Եւա ջան  
Տուտաաղ ընկայ ըստուց շարի երևան, դուն կեցիր  
և այլն:

## ՀԱՅ ԶԻՆՒՈՐԻ ԵՐԳԸ

(Մարշ)

«Թող բարձրացնեն» երգի եղանակով

Սիրուն Սօֆիկս տանը թողեցի,  
Աչքս յետևէս կուռի գնացի,  
Ծեր ծնողներս լացին, ողբացին  
Աստուածածնանը մատաղ կտրեցին:

Բազում զինւորներ մենք հաւաքուեցինք,  
Սիրտ առանք, սիրով դաշն կապեցինք.  
Մենք մեր մեծերին հնազանդ էինք,  
Որ կողմ ուղարկէին այնտեղ կերթայինք:

Երբ շորերս հագանք, հրացան առանք,  
Ասինք դէ եղբայրը, օգնութեան երթանք  
Մեր հայրենիքը վտանգի մէջ է  
Մեր մեծ Կայսերը մեզի կը կանչէ:

Դէհ մեր հայ տղերք, մենք ուրախ գնանք  
Մեծ պատերազմից առողջ յետ դառնանք.  
Հասնենք օգնութեան, կանչենք միաձայն  
Մինչև որ Տէրը հասնի փրկութեան:

Քաջ Վարդան Վահանը մենք չը մոռանանք  
Սրանց ցեղիցն ենք, պարծանքով գնանք  
Մեր հայ քահանայն զօրքի մէջ խառնենք  
Սրերս ցոյց տանք և խաչով օրհնենք:

Թող մենք զոհ գնանք՝ ազգը աղատենք,  
Աշխարհի մէջը անուռն հաստատենք.  
Մեր հայրենիքը թող կանգուն մնայ,  
Հայ ժողովուրդը մեզնով պարծենայ:

Զ Ո Յ

Երկունք մայրը ցաւով ծնաւ  
Բերեց մի արու զաւակ.  
Կրճից բղխած կաթնաաղբիւր  
Նա ուտելու էր փափակ.

Օրոցքն օրօրեց, քաղցը երգեց  
Անուշ քունը նա կտրեց,  
Բազում ցաւեր, նեղութիւններ  
Ու տանջանքներ նա կրեց:

Ինչպէս բացուած վարդի կոկոն  
Անուշ հոտեր նա բուրեց,  
Քաղցը լեզուով սիրով, պատուով  
Մօրը սիրտը փայփայեց:

Սնցան, օրեր ու տարիներ  
Մայրը որդուն կսպասէր  
Սիրոյ վարդից ինքն էլ քաղէր  
Իրան արժան համարէր:

Ազգի սէրը քաջալերեց,  
Մայրը տղին զէնք տուեց.  
Ասաւ «մեռիր դու քաջի պէս»  
Որդուն ազգին նուիրեց:

Սիրոյ տեղակ սուրը զարկին  
Մատաղ սիրտը պատառին,  
Արուն հոսեց ալ վարդերին  
Ծաղիկներին ցող տուեց:

Մայրը ընկաւ որդու վրայ.  
Հազիւ նորան ետ, բերին  
Մայր ու որդի ազգի սիրուն  
Իրանց կեանքը զոհուեցին:

## ՀԱՅ ԿԱՄԱԽՈՐԻ ԵՐԳԸ

Անհաշիւ թւով, իր կամքով կուգան,  
Հայի վրէժը առնելու կերթան.  
Իրանք իրանց արիւնը թափեն  
Չար թշնամու ձեռքից ազատեն:

Հայրենեաց պաշտպան խմբապետները  
Պաշտում են կուր լեռներ, դաշտերը,  
Քաջառողջ կրճից արիւն են թափում  
Ջահիլ բոյրերը քրդից ազատում:

Գնացէք, կռուէք, Աստուած ձեզի հետ  
 Վրէժներդ առէք, կրկին հետ դարձէք.  
 Պատիւ կը բերէք ձեր հայրենիքին  
 Համբաւ տարածէք ամբողջ աշխարհին:

## Ա Ռ Հ Ն 2 Ա Կ

Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ  
 Հայրենեաց բաղդին մօտուստ ես տեղեակ,  
 Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ,  
 Յեղափոխութեան ձայնատու Հնչակ:

Նոր գաղափարի քո ցանած սերման  
 Ազնիւ պտուղներ հասուննաւ արագ,  
 Կարին և Պոլիս որոտման նման  
 Անդրանիկ շարժմունք ծնաւ քե, Հնչակ,

Չար բռնակալը, հայոց կեղեքիչ  
 Վախէն պահուեցաւ ոսկի գահին առակ.  
 Խուլ Եւրոպային թնդաց մէն դահլիճ,  
 Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:

Այսօր քո սերմանց նոր պտուղը հաւ,  
 Հասած կարմրին արեան նմանակ,  
 Կենաց և մահու սուրբ ժամմերձեանայ,  
 Կարմիր հրաւերիդ ակնունինք, Հնչակ:

Կոչնակդ հնչեցուր, հնչեցուր արագ,  
 Թող հայք ոտք ելլեն ծագէ մինչև ծագ,  
 Փշրէ ծանր շղթայն, ծագէ նոր արեգ,  
 «Ազատ ենք» հնչէ ոսկեղօծ Հնչակ:

## ՊԼՆԴԽՏԻ ՈՂՋՈՅՆ

Ողջոյն տուէք իմ հայրենեաց  
 Կիսակործան տաճարներուն.  
 Ողջոյն տուէք աւերակաց  
 Արարատեան գաւառներուն:

Ողջոյն տուէք Աւարայրին  
 Արինաներկ սուրբ վայրերուն,  
 Ողջոյն տուէք տխուր լուսնին  
 Որ լացնէ սև շիրիմներուն:

Ողջոյն տուէք պանդուխտ Հայուն,  
 Թշուառ Հայուն, չուառ Հայուն,  
 Ո՛հ, ձեռք տուէք, ո՛հ սիրտ տուէք  
 Հոգի տուէք անկեալ Հայուն:

Ողջոյն տուէք ոլոր մոլոր,  
 Բոլոր վազող գետակներուն,  
 Ողջոյն տուէք պղտոր բոլոր  
 Աղի, լեղի աղբիւրներուն:

Ողջոյն տուէք ի հող եղած  
 Արքայական պալատներուն.  
 Ողջոյն տուէք գետնատարած  
 Սրբոց անբիծ մասունքներուն:

Ողջոյն տուէք խումբ ի խումբ  
 Որքան թաղած հոգիներուն,  
 Ուր Հայ սոխակ թումբ է ի թումբ  
 Կեանք կը խնդրէր դեռ շատերուն:

Ողջոյն տուէր հայ մուսային  
Որ լայ զփառս իւր հաւերուն,  
Ողջոյն տուէր իմ քնարին  
Որ Հայկայ տանն է ողբերգուն:

## ԵՐՋՐՈՒՄ

Ձայն մը հնչեց էրզրումի հայոց լեռներէն  
Թունթ թունթ ելան հայոց սրտեր զէնքի շաշիւնէն:  
Հայ գիւղացին դարուց ի վեր սուր, զէնք չէր տեսած,  
Դաշտը թողուց, սուր հրացան՝ բահի տեղ առած:  
Հայ ծերուկը ցուպն ի ձեռին լալով խնդում է  
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնել:  
Հայ տիկինը ստիպում է ամուսնոյն գնալ,  
Պատերազմի դաշտին վերայ վէրք տալ ստանալ:  
Գրնքուշ կեանքը ծանր է թըւում Հայ օրիորդին  
Զէնքը ձեռին սիրտ է տալիս հայոց քաջերին:  
Երիտասարդը զէն ի ձեռին գոռում գոչում են  
Պատերազմիլ, ազգին համար և արիւն թափել:  
Հայ քաջերը արիւն գըրով նամակ ցրուել են  
Արարատայ դաշտին վերայ գինուոր խմբել են:  
Ա՛լ բաւ լացիր, Մայր Հայաստան երկիրդ փառաց,  
Քու զինուորներդ միշտ կտրիճ են, որչափ ալ  
քաղցած:

Առ ու գգուէ այդ քաջերը քու սրտիդ վրայ,  
Որք կը թափեն իւրեանց արիւն սուրը հողիդ վրայ:  
Անմիութիւն, տունը քանդող Հայոց խեղճ ազգին,  
Հրաժարուաւ, տեղի տուաւ միութեան ձայնին.

Լըսեց քուրդը ու սառեցաւ արիւնը խեղճին  
Չէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին:  
Յընձմ, մայր մեր, ով Հայաստան, որդիքդ միացան:  
Տասը տարուան սուգ ու թախիժ մեզնից վերացան:  
Ուրախացաւ Մայր Հայաստան ելաւ կանգնեցաւ,  
Վեց դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ:

## ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԿՈՌԻԵՆՔ

Մենք պէտք է կուռնք և ոչ լաց լինենք,  
Ազգի կորուստը զէնքով յետ խլենք.  
Այսքան դար լացինք, ո՞վ է լսողը,  
Մեզ թնչ շահ բերեց արցունքի ցօղը:

Այլևս չլանք և ոչ լաց լինենք,  
Կրակուած սրտով մեր գործը վառենք,  
Անվհեր քաջին այս է պատկանում.  
Միշտ ազատ մեռնիլ կուռի լայն դաշտում:

Մօլի և երկչոտ թշնամին թող լայ.  
Երբ հայ քաջի դէմ կուռ դուրս կուգայ,  
Մենք վախեցող չենք մահից, տանջանքից,  
Եւ ոչ ալ մահու դաժան գնդակից:

Անէձք այն հօրն, որ չի մղում որդուն,  
Որ ազգի սիրուն նա թափէ արիւն.  
Ամօթ այն Հային և բիւր նախատինք,  
Որ ազգի սիրուն չի գործում բարիք:

## ՄԻ ԼԱՐ ԲԼԲՈՒԼ

Մի լար բըլբուլ, քեզ մի տանջիր,  
Որ փոթորիկն անիրաւ ...  
Վարդըդ սիրուն, վարդըդ կարմիր  
Թըփից պոկեց ու տարաւ...

Կ'անցնին օրեր, կուգայ կրկին  
Մի նոր գարուն վարդաբեր.  
Եւ մոռացած քո վիշտը հին՝  
Նորից կ'երգես վարդի սէր:

Բայց վա՛յ կեանքին այն խեղճ երգչի  
Որ վաղաժամ ուրբացաւ,  
Իր սիրելի խօսուն վարդին  
Սառը հողի մէջ տեսաւ:

Երգչի համար գարուն չը կայ  
Ո՛չ էլ նոր վարդ կը սիրէ.  
Նա պէտք է լա՛յ, պէտք է սըգայ  
Մինչ յաւիտեան կը լըռէ:

## Յ Ա Ն Կ

Երես

|                                   |    |
|-----------------------------------|----|
| Թիւրքահայի բաղձանքը               | 1  |
| Երկիր                             | 2  |
| Իմ ազգը                           | 3  |
| Իմ համոզմունքը                    | 4  |
| Ծիրանի ծառ                        | 5  |
| Հայեր                             | 6  |
| Հայի ճուշտ                        | 7  |
| Նուէր Սասունցի Մակարին            | 8  |
| Վերջն է գովելի                    | 8  |
| Զ'կայ                             | 9  |
| Անցկալի                           | 10 |
| Իմ որդուն                         | 10 |
| Հայաստանի աստղը                   | 11 |
| Սասունցիք                         | 12 |
| Հայերուս սեփականութիւնը           | 14 |
| Անցեալից և ներկայից               | 15 |
| Ազգի վիճակը                       | 16 |
| Զէյթունի երգը                     | 17 |
| * *                               | 17 |
| Սասունասար                        | 18 |
| Արև                               | 19 |
| Կարելի է                          | 20 |
| «Հօ» տառը                         | 21 |
| Կոչ մեր հաւատակիցներին            | 22 |
| Քայլերդ հանգուցեալ խանի յիշատակին | 23 |
| Սասնոյ անցքերից                   | 24 |

\* \*

|                        |    |
|------------------------|----|
| Պիտի հասնի             | 30 |
| Ազատութիւն             | 31 |
| Ի զէն                  | 33 |
| Արաբոյի երգը           | 34 |
| Իդձ                    | 35 |
| Արեգակ                 | 35 |
| Յղի հայաստանը          | 36 |
| Հովիտ                  | 38 |
| Հարաւի մրմունջը        | 39 |
| Զունինք                | 40 |
| Զէյթունի մարշ          | 42 |
| Հաւը                   | 44 |
| Խղճի վիճակը            | 44 |
| Անցեալից և ներկայից    | 45 |
| Ալ ու ալւան            | 46 |
| Անբաժիններ             | 47 |
| Հայերուս բաղձանքը      | 47 |
| Հարսներգ               | 49 |
| Հայերս                 | 50 |
| Հայաստանն է            | 50 |
| Հայի աղաչանքը          | 51 |
| Հայոց բախտը            | 53 |
| Զկայ                   | 54 |
| Մեծ քեօի               | 55 |
| Հրաւէր մարտի           | 56 |
| Հայդուկի երգ           | 57 |
| Մշեցոց նոր սերունդը    | 58 |
| Զինուած պատրաստուած... | 59 |
| Անդրանիկի մարշը        | 60 |
| Քաջ Անդրանիկին         | 61 |
| Արիք, եղբարք, միանանք  | 62 |
| Արխանհանի երգը         | 63 |

|                                                  |     |
|--------------------------------------------------|-----|
| էյ ջան հայրենիք                                  | 64  |
| Տարագիր                                          | 65  |
| Երգ                                              | 66  |
| Օտարութիւն                                       | 69  |
| Տեսիլ Հայաստանի                                  | 70  |
| Երազ                                             | 72  |
| Խնամին                                           | 74  |
| Վեցեակ                                           | 75  |
| Նուէր Սասունի հերոսներուն Սեպուհին և<br>Մուրատին | 78  |
| Աղօթք                                            | 79  |
| Անդրանիկին                                       | 80  |
| Հայրենիք                                         | 81  |
| Արձագանք Հայաստանի                               | 82  |
| Իմ խրատը                                         | 83  |
| Սէմայի                                           | 84  |
| Գետակ                                            | 86  |
| Սէր                                              | 88  |
| Գաղէլ                                            | 88  |
| Գէորգ Զառչը                                      | 89  |
| Հայաստանի սուգը                                  | 90  |
| Ինձ մի խնդրի                                     | 91  |
| Խանի երգը                                        | 92  |
| Ֆիտայի                                           | 94  |
| Վրէժ                                             | 95  |
| Մուշ                                             | 96  |
| Մուշ                                             | 97  |
| Մուրատի երգը                                     | 97  |
| Հնչակեան մարշ                                    | 98  |
| Ֆէտայի                                           | 99  |
| Քաջ եղէք                                         | 100 |
| Քայլերդ Խանասորի                                 | 101 |

|                                     |     |
|-------------------------------------|-----|
| Հայ ապրիսք                          | 102 |
| Ուրախ երգ                           | 104 |
| Հայաստանը                           | 106 |
| Վերջ չեղաւ                          | 107 |
| Մի թիւրքահայի երգը                  | 108 |
| Կնի էլ                              | 109 |
| Հայի կենաքից                        | 110 |
| Մի խումբ քաջերի նահատակութեան մասին | 111 |
| Բայիաթի                             | 114 |
| Յոյս                                | 116 |
| Հայրենիք                            | 117 |
| Տաճկահայի գարունը                   | 117 |
| Շատ ուշացաւ                         | 118 |
| Մօտս է հարկաւոր                     | 119 |
| Ո՞ւր տեղ է                          | 120 |
| * *                                 | 120 |
| Խաղաղ դաշտի որդիք                   | 122 |
| Մուշեղի երգը                        | 123 |
| Խաւարել եմ ինչպէս գիշեր             | 124 |
| Համազասպի երգը                      | 124 |
| Քաջարի հայդուկներ                   | 125 |
| Խանասորայ արշաւանքը                 | 137 |
| Խանձ կա ջան                         | 128 |
| Հայ զինուորի երգը                   | 129 |
| Զոհ                                 | 130 |
| Հայ կամաւորների երգը                | 131 |
| Առ Հնչակ                            | 132 |
| Պանդխտի ողջոյն                      | 133 |
| Էրզրում                             | 134 |
| Մենք պէտք է կռուենք                 | 135 |
| Մի լար բլբուլ                       | 136 |

✕

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԵԿ

ԴՐՈՒՆ

Писчебум. магазинъ К. Арзуманьянъ  
Тифлисъ, Эрив. площ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0380876

72.787..